դութեան՝ նեղութեանց ցաւոց վրայ ինկնող կրակը՝ ձեր երակներէն բղնող ծիրանացայտ աղբիւրներով կը մարեք, գետին զարկէք ձեր արիւնուուշտ ձեռքիւրէն ձեր արիւնաբրու զէնքերը, մաֆիկ ըրէք ձեր սիրտը ցաւած իշխանին դատավճիրը. — Այս երեք անդամ է որ փուճ խօսք մ'առաջ եկած քաղաքական կանելերը, քեզի համար ձեր Գարուշէտ, և քեզի համար, Մոնդակէս, մեր փողոցներուն հանգստութիւնը վրովվեցին. և երեք անդամ Վերոնայի վաղեմի բնակիչները՝ իրենց տարիքին վայլած չնորհալի և աղլոր պանուածանքներէն զրկեցին, որ ձեռօք խիլ ձեր եղած հինաւուրց կողմանականները դրկեն որ խաղաղութեան ժամանակ ժանդահարեալ զէնաքերնին ձեռները անուք առնեն ու ձեր ժանդատած ատելութեան մէջ մտնեն. ասոր համար, զիտցած ըլլաք, որ թէ որ նորէն մեր փողոցները տակնուլրայ ընէք՝ ձեր կեանքը՝ խաղաղութեան տուգանքը հատուցանէ պիտի: Այս անդամ, թող ամենք բաներնին երթան, գուն Գարուշէտ, հետո եկուր, գոն ալ Մոնդակէս, այսօր օրհասարակէտք մեր հասարակաց դատաստանաբանն եկուր, որ այս եղած անցից վրայօք մեր դատաղութիւնը լսես: Գարձեալ կ'ըսեմ, ով որ իսկցին ասկէ չմնկիր, թող մահուան դատապարտուի:

(ԻՇԽԱՆՆ հետեւուներու: ԳԱԲՈՒԼԻԵՏ, ՏԻԿԻՆ ԳԱԲՈՒԼԻԵՏ, ԴԻՊԱԼՏՈՍՈՒ: ՔԱՂԱՐԿԱՑԻՔ և ԾՈՒՇԱՇԻՔ ԻՇԽԱՆՆ:)

ՄՈՒ. Այս հին դժտութիւնը ով նորէն ոտք հանեց + ըսէք նայիմ, եղբօրորդի, գուք հո՞ն էիք երբ վէճն սկսաւ:

ՊԵՆ. Ձեր սոսիին ծառայները և ձեր սպասաւորները հոսաղ կոիւ ընելու վրայ էին, երբ վրայ հասայ. իսկոյն սուրս քաշեցի որ զիբենք զատեմ. Նոյն կէտին Գիպալատու կրակ կտրուած սուրը պատրաստաղէն վրայ եկաւ, այս կերպով ինչպէս որ կոիւ ընելու հրաւէրներ կը կարուար ականջացո, նոյնպէս ալ զայն իր զլխուն չորս դին Ճօճեցնելով օդը կը կոտրտէր, որով ուրիշ վնաս մի չէր կրնար ընել, բայց եթէ ինքընք նախատելու համար սուլ մոնքներ հանել. երբ այս միջոցներու իրենց հարուածոց և ռաղևամանց մէջ միջնորդութիւնը ընելու կ'աշխատէինք, երկու կողմէն ալ մարդիկն աւելցան և սկսան զարնուիլ, մինչև որ իշխանն եկաւ ու թշնամիք զատուեցան:

ԸՆԴՀԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՏԻԿ. ՄՈՒ. Ա'Հ, ուր է Հռոմէոսը, այսօր տեսա՞ր զինք. շատ ուրախ եմ, որ այս կոռույցն մէջ չգտնուեցաւ:

ՊԵՆ. Տիեզերապայծառ արեւը իր ոսկեղէն պատուհանները արևելքին կողմը բանալէն ժամ մ'առաջ՝ խելավրդով խորհրդածութիւններս գրդեցին զիս որ պատուելու համար գուրս ենելու: նաև տեղ— փոքր անստավին մոլաթղենեաց ծայրը որ քաղքին արևելցաւ եան կողմը կ'ինկնի, այնքան կանուխ ժամանակ ձեր որդին տեսայ, դէպ' իրեն քալեցի. բայց ինք միտքս իմանալով՝ անտառին խոտուղիներուն մէջ սպրկեցաւ. ես ալ՝ իր մտատանջ հակամատութիւններն իմիններէս կշռելով, որոնք որքան մինակ մնայ մարդ այնքան կը շատնան, առանց իր յօժարութեանց գաղչելու իմիններուս ետեւ էն զնացի, և ինձմէ ուրախութեամբ փախչողէն՝ ուրախութեամբ խոյս տուի:

ՄՈՒ. Քանի քանի առաւօտներ հոն տեսնուեցաւ ինք, որ առաւօտեան զովագին ցողերը՝ իր արտառուքներով կ'աւելցնէր, և իր խորունկ հառաջանքներովը՝ ամսերուն աւելի շողիներ կը վերառաքէր. բայց այս ամենն ալ այնքան կանուխ կ'ընէ, որ հազիւ թէ համայնտգուարձ արփին՝ արևելեան ամենահեռի կողմին Արշալոյսին անկողնոյն ստուերաձիգ վարագոյնները քաշելու րոպեին վրայ՝ նայիս որ տրտմազդած զաւակս ալ՝ տուն կը զառնայ. լոյսէն կը փախի, և իր սենելին մէջ քաշուելով ինքզինք կը պահէ. սպատուհանները կ'զոյէ, ցերեկուան կենսապարզե լոյսը կ'արտակալովէ, և արուեստակեալ զիշեր մի կը ձեւացնէ իւր սենեակը, զիս ալ զիշերուն պէս մթութեան մէջ ձեւելով. այս բնաւորութեան վերջը ցաւալի և չարագուշակ կրնայ ըլլալ՝ թէ որ համոզական խրաններով շարժառիթը չվերցուի:

ՊԵՆ. Ազնիւ հօրեղայր, հրամանիդ պատճառը զիալք:

ՄՈՒ. Ա'Հ զիտեմ, ոչ ալ իրմէ բան մի կրնամ իմանալ:

ՊԵՆ. Ամեննին միջոց մի բանեցնելով ստիպեցիք զինք:

ՄՈՒ. Թէ ես, և թէ ուրիշ շատ բարեկամներ. բայց ինք ինքնին և իր կամացը խրատասուն է. — Ճշմարիտ որն է, չըսնեմ— բայց ինքզինք այնպէս կը ծածկէ և այնպիսի կերպով դարտնիք դուրս չհաներ, և այնքան ալ փորձուել և երեան ենիլէն

կը փախչի՝ որպէս թէ, իր թարմ տերեները օդին մէջ տարածելու կարող ըլլալէն առաջ՝ կամ իր զեղեցկութիւնը արևուն նորիւ բելէն առաջ՝ իւր ծոյը ծալկեր որդ մի պարունակող ընձիւղի ձիւղ մ'ըլլար: Թէ որ կարող ըլլամբ դիմանալու թէ իւր ցաւերը ուրկէ առաջ կը դան, մննք ալ մնծաւ հաճութեամբ ձեռ քերնուս եկած ծին չափ կ'աշխատիմք որ գարման տանիմք գիտցածովնիս:

ՀՅՈՒՄԵԱԾ ՃԵՐԱԿԱՆԻ Է ԺԴԱԿ:

ՊԵՆ. Սայեցէք, ահա կը դայ. թէ որ կը հաճիք՝ մէկդի քառ շուեյէք, ես՝ կամ իր արտառութիւնները կ'իմանամ, և կամ կը մեռ ծուիմ:

ՄՈՒ. Երանի՛ թէ կենալով՝ ականջօքդ Ճշմարիտ խոստովանութիւն մի լունու չափ բազգաւոր ըլլայիր: Քալեցէք, Տիկին, եւ էք երթանք:

(ՄՈՒԳԱԿԻՍ և ՏԻԿԻՆԻ կ'ենէն:)

ՊԵՆ. Բարի լոյս, հօրեղբօրոդի՛:

ՃՈՒ. Ցորեկը գեռ այդքան գեռատի՛ է:

ՊԵՆ. Հիմակ ժամն ինն զարկաւ:

ՃՈՒ. Ափսո՞ս ինձ, արտում ժամերը աչացս երկարատե կ'երեւան: Հայրս էր այն որ շտապաւ զնաց հոսկէ:

ՊԵՆ. Հրամերէք. — Ի՞նչ արտառութիւններ են որ Հռոմէոսին ժամերը կ'երկարատեն:

ՃՈՒ. Չանենալով զայն՝ զորս ունենամ՝ կը կարձայնեն զանոնք:

ՊԵՆ. Սիրոյ մէջ ես:

ՃՈՒ. Ընկճեցայ —

ՊԵՆ. Սէրէ՞ն:

ՃՈՒ. Իմ սիրողիս շնորհներէն դուրս, որոյ սիրոյն մէջն եմ:

ՊԵՆ. Ափսո՞ս, այդ սէրը՝ որ երկոյթին մէջ անուշ կ'երեի, փորաձի մէջ այդքան ալ անազորյն ու խստըմեր է եղեր:

ՃՈՒ. Ափսո՞ս, այս սէրը՝ որոյ աչերը դեռ երիդակապ կը կենան, առանց աչաց՝ իւր կամաց համեմատ քայլընթաց մի սիկտի տեմնէ: Ա'որ պիտի Ճաշենք: — Ա'Հ, ափսո՞ս ինձ: — Այն ինսոր կուր էր սաւաեղ: Բայց բան մ'ըսեր ինձ, ինչու որ ես ամեն բան լուցի: Այս տեղ ատելութեան հետ շատ զործ կայ տեսնելիք,

առկայն սիրոյ հետ մղ աւելի . — ի՞նչ , մեղք . ո՞չ , կապայարոյց սէր . ո՞չ , սիրաշաղախ ատելութիւն . ո՞վ ոչնչէ նախ զոյացած առ մեն ի՞նչ . ո՞վ ձանրաբեռն թեթևութիւն . անաշառ ունայնութիւն . ո՞վ շնորհատեսիլ ձեւրու խառնափնդոր քառութիւն . կապարեայ փետուր , լուսաւուր մառախուղ , սառնապաղան կրակ , ախտահամակ առողջութիւն , հսկող քուն , որոնք ոչինչ ըսել են իմ քոլ ; — Այս իմ զզացած սիրով՝ սէրը չեմ զզար ես ասոր մէջ : Խնդաւ լիքդ չդար :

Պէս . Զէ , հօրեղբօրորդի , առաւել լալիքս կը դայ :

Հնոն . Աղէկ սիրու . ի՞նչ բանի վրայ :

Պէս . Քու բարի սրտիդ ճմկութեանց վրայ :

Հնոն . Տեսար . ասանկ կ'ըլլայ ահա սիրազանցութիւնը . — իմ ցաւերու պինտ ձանրաբեռնեալ են սրտիս վրան , զօրս կ'ուզես որ քու աւելցուցածներովդ ալ բեռնապատկես . այդ սէրը , զօր կը ցույնես ի՞նձ , իմ ունեցած խիստ շատ ցաւերուս ուրիշ ցաւեր ալ վրան կը զիգես : Սէրը հառաջանաց դոլորչեաց հետ ելնող մուխ մ'է , երբ մաքրուի տարփաւորին աչքին մէջ կոյծակնացայտ կրակ մ'է . երբ սրտաբեկին տարփաւորին արտասուօքը լճացած ծով մ'է . ուրիշ ի՞նչ բանի նմանցներ : պինտ խոհեմարարոյ խենդութիւն մ'է , հեղչամշակուկ դատնութիւն մի և քաղցրաւինեալ անուշութիւն մ'է : Մնաս բարեաւ , հօրեղբօրորդի : (Երթաւալ)

Պէս . Կեցիր , ես ալ հետդ պիտի զամ . եթէ ոչ , թէ որ զիս այսպէս ձգես , ի՞նձ անիրաւ բան մ'ըրած կ'ըլլաս :

Հնոն . Գնան բանդ գուն ալ Աստուած սիրես , ես ինքինքս կոռուսի . ես հոս չեմ : Ես Հռոմէսու չեմ , ան ուրիշ տեղ մ'ըլլալ պէտք է :

Պէս . Իրան , շնորհան ըսէ ի՞նձ , Աստուած սիրես , ո՞լ է սիրողդ :

Հնոն . կ'ուզես որ ըսեմ՝ ու հեծկլուամ :

Պէս . Հեծկլուան , չէ , ի՞նչո՞ւ պիտի հեծկլուաս . դո՞նէ մելամաղ ձոտ կերպով ըսէ ի՞նձ ո՞լ ըլլալ :

Հնոն . Գնան մելամաղոս հիւանդի մ'աղաչէ որ իր կտակն ընէ . — ախ , խօսքը դէշ կ'ըսափէ զիս երբ այդ քան զմնդակ է . շնորհան ըսէմ , հօրեղբօրորդի , ես կի՞ն մի կը սիրեմ :

Պէս . Տեսար հիմա ինտոր մօտէն նշան առեր եմ , երբ մակաբերեցի որ սէր կ'ընես :

Հնոն . Այդ ինտոր զիսպագէտ ու շիտակ նշան առնող ես եղեր : Պինտ սիրուն կի՞ն մ'է դիտես :

Պէս . Սիրելի հօրեղբօրորդի , վարպետութեամբ շիտակ առնուած նշանկը շուտով նպատակէտին կը համդպի :

Հնոն . Բարի , գուն այդ նպատակէտին չկրցար հանդիպեցնել , վրիպեցար . ի՞նք Կուպիտանին նետովը շլանտիր , Արտեմիսի Ճարպիկութիւնն ունի . և ողջախոչութեան հզօր փարձաւութեամբ առ զէկ մ'ըսպառապինուած՝ սիրոյ տկար ու տղայական աղեղէն չվիթառուուած կ'ապրի : Սիրահարական խօսքերէ չպաշարուիր և ոչ սիրայարձակ աշաց պատահման կը հանդուրմէ , ոչ ալ սուրբերն իսկ մոլորեցնող սակոյ առ ջև՝ ծնրագրութիւն կ'ընէ . ո՞չ , ի՞նք զեղցիկութեամբ հարուստ է . և աղքատութիւնն այս է միայն , որ երբ մեռնի՝ իր հարստութիւնն ալ զեղցիկութեամբ մեռնի սիրտի :

Պէս . Ուրեմն , երդում ըրած է որ միշտ ամուրհի մնայ :

Հնոն . Հրամակես , և այդ խնայողութեան մէջ ի՞նքզինք կ'ըսպառէ . ի՞նչու որ , զեղցիկութիւնը՝ իր անաշառութենէ սովատան ջնալ , բոլոր յետաղայ սերունդներէ կը խզէ զեղցիկութիւնը : Պիստ սիրուն է և պինտ խոհեմ . խոհեմութեամբ այնքան սիրուն է , որ իս յուսահատեցնելով երջանկութեան կ'արժանանաց . երգմանացութեամբ սէր խոստացաւ , և այս խոստմանը մէջ մնուած կ'ապրիմ որ հիմա զայն ըսելով ապրած մնամ :

Պէս . Ինձմէ խրատ առ , զի՞նք մոքեդ անցունելը մոռցիք :

Հնոն . Ո՞չ , սորմեցնուր ի՞նձ ինտոր մոռնամ այս մատածմոնքը :

Պէս . Աշերդ ազատ պահելով , ուրիշ զեղցիկութիւններ աչազննէ :

Հնոն . Այդ այնպիսի միջոց մ'է , որ աւելի պիտի պարտաւորէ զիս իրենը զերազանց է ըսելու . այն երջանիկ դիմակները , որ սիրուն ափկնանց Ճակատները կը համբաւըն , սև ըլլալով՝ մեր միարբը կը բերեն որ զեղցիկութիւնը ծած կել կ'ուզեն . այն որ անզամ մի կը կորանայ՝ չկրնար մոռնալ իր կորուսած աչքի լուսին թանկազին զանձը . ցուցաւ ի՞նձ հրաշատեսիլ կի՞ն մի , և հարցուր ի՞նձ

թէ իր զեղեցկութիւնը ի՞նչ բանի կրնայ ծառայել, ոչ ուրիշ բառ
նի, եթէ ոչ, ձեռքիս մէջ եղած առմասի մի՝ ուր անոր զեղեց
կութիւնը կարդալու կարող կ'ըլլամ։ Ծառայ եմ. դուն ինձ մաս
ուացութիւնը դաս չես կրնար տալ։

Պէս. Ես՝ այդ վարդապետութիւնը կամ կը հատուցանեմ, և կամ
պարտքովս կը մեռնիմ։

(ԷՇԸՆԸՆ։)

ՏԵՍԱԲԵՆ Բ.

Փողոց մի։

ԳԱՐԱԿԱՏ, ՊԱՐԻՍ ։ ԾԱՌԱՅ Հ Է ՀՐԱՅԵՆ։

ՊԱՅ. Մոնթակէն ալ ինծի պէս պատժապարտութեան տակ ինս
կած է. ու կարծեմ որ մեզ պէս ծեր մարդոց համար գմուռ բան
չէ հաշտութիւն ընելը։

ՊԱՅ. Երկուքի ալ պատուաւոր համարում ունիք, ու մեղք որ
այսքան ժամանակէ ի վեր սիրով չէք վարուիր։ Բայց հիմակ,
տէր իմ, իմ առաջարկութեան ի՞նչ ըսելու եք։

ՊԱՅ. Ի՞նչ որ արդէն ըսի զայն կը կրինեմ նորէն. զաւակն՝ աշշ
խարհիս մէջ դեռ օտարուհի կը նմանի, ու տակաւին տասնուշորս
տարսւան փոփոխութիւնը տեսած չէ. թող երկու զուող ամառ
ներ ալ անյնին, ու այնուհետեւ մատծենք թէ զինք հարս ընելու
ժամանակն է։

ՊԱՅ. Իրմէ շատ աւելի նուազահասակ աղջկունք՝ երջանիկ մայս
երե եղած են։

ՊԱՅ. Եւ այնքան կանուխ կարգուղիւնը ալ պինտ շուտ աւրը-
ւած են։ Աշխարհս՝ իմ բոլոր յոսերս կլլեց, բաց իրմէ, և ինքը
կ'ըսեմ, իմ աշխարհս յուսալից տիրուհին է։ Բայց սիրադ բաց
իրեն, աղնիւ գարիս, զնա իր սիրուը մտիր նայէ, իր հաւանու-
թիւնը՝ իմ կամաց հետ զուղլիմաց է. իր հաճեհաւանութեան
մէջ, իր ընտրութեան որոշմունքներուն հետ՝ իմ ալ հաւանութեանս
կամահաճ և գոհունակ ձայներս կը միաբանին։ Այս զիշեր իմ հին
սովորութեանց համեմատ՝ ինձոյք մ'ունիմ, ուր իմ սիրելի բարե-

կամմերս հրաւիրած եմ, և դուն ալ հոն դանուելով՝ կ'ուղեմ որ
հիւրերուն թիւն աւելցնես բարեղալստեալրդ։ Իմ խեղա տնակիս
մէջ, զիտէ ու տե՛ս այս զիշերս, որ երկրաշըջիկ աստղերը՝ երկ-
նից լոյսը կը խաւարյնեն. ինչպէս որ դաշարեօք պէճնազարդեալ
Ապրիլը իւր զարշապարօք՝ կաղացեալ ձմեռուան վրայ քայլած աս-
տեն ցոփանէր երիտասարդք կը հրձուին, ասանկ ալ գուն՝ այս զի-
շեր իմ տասն մէջ զեռաբոյս և նորածաղիկ երիտասարդուհեաց մէջ
պիտի զուարձանաս. ամենուն մտիկ ըրէ, ամեն տես, ու զայն մի-
այն սիրէ աւելի, որ արժանառազոյնն է. ահա ասանկ ալ այս
բազմութեան մէջ, իմինս, որ անոնցմէ մէկն է, սակայն իւր արժա-
նաւորութեան կողմէ մէկն ալ չէ։ Քալէ, երթանք, — ինձ նայէ,
մանչ, զնա Վերոնան տակնուվրայ ըրէ ու սա մարդիկները դրի՛,
(ԳԱՐԱԿԱՏ և ՊԱՐԻՍ ԷՇԸՆԸՆ։)

ՖՈՒՅ. Վերոնան տակնուվրայ ընեմ այն մարդիկը դանեմ, որոնց
անունները ասոր մէջ զրուած են։ Ասոր մէջ՝ կօշկակարը՝ իր
կանդունը, դերձակը՝ իր վերջնը, ձկնորսը՝ իր մատիտը և պատիե-
րահանը՝ իւր ուռկանները պիտի բանեցնէ զրուած է. Բայց ես այս
մարդիկ փնտուել գտնելու խրկուած եմ, ու ասոնք զրու մարդուն
ինչ անուն զրեն ալ կարդալու կարող չեմ երբէք։ Երթամ կար-
գացող մի դաներ։ — Ահա պատեհ ժամանակին հասան։

ԳԵՆՎՈՒՅ և ՀՐԱՄԱՆ Է ՀՐԱՅԵՆ։

Պէս. Չայնդ կտրէ, դուն ալ, մէկ կրակը ուրիշ կրակի մ'այ-
րիլը կը շիշանէ, ցաւը՝ մէկ ուրիշ վիշտերէն կը թեթևնայ. Երբ
զըմւիտ զառնայ՝ զլուխդ ետք գարձուր և օրբութիւն կը դանես. ·
յուսահատական տրտութեան մէկ ուրիշ վիշտերը կ'աղէ ինայ. ·
աչքդ՝ մէկ բանէն մէկ ուրիշ բանի մրոյ անկէ, ու կը նայիս որ
հին բաներուն խորազբեայ մոռը կը ցնջուի իներթալ։

ՀՐԱ. Թաթենաւոյդ տերը՝ պինտ գործուող նպեւանի մ'է աղոր։

Պէս. Ի՞նչ բանի դէմ, ի՞աշունել։

ՀՐԱ. Սրունքներուդ կոտրուած սակարգերուն պահպան գործուուն է։

Պէս. Ինչո՞ւ, Ճռոմէոս, խենդեցա՞լ :

Դժո. Զիսենգեցայ, այլ բանտի մէջ դրուած և առանց սնունդի պահուած, ծեծ կերած ու չարչարուած խենդէ մ'աւելի կապակուեցայ : Օ՛, բարի առաքեցար, բարեկամ :

Ծիռ. Աստուած կենակ տայ ձեր մեծապատռութեան . — կ'առ զաշեմ, տէ՛ր իմ, կարդալ զիտէ՛ք :

Հժո. Այս, թշուառութեան մէջ՝ բաղդո :

Ծիռ. Գուցէ այդ բանն առանց դրբի սովորած էք . սակայն կ'առ զաշեմ, ինչ որ տեսնէք կրնաք կարդալ :

Հժո. Անշուշա, թէ որ գիրերն ու լեզուն զիտեմ :

Ծիռ. Պինտ համով խօսք մ'ըսիք : Աստուած ձեր բանն յառ ջողէ :

Հժո. Կեցիք, մարդ, ես կարդալ զիտեմ . (Է՛ լորրա)

Սինեօր Մարդինօ եւ, իւր կինը եւ, աղջկոնք . Անսեղին կոմինց եւ, իւր գեղեցիկ քոյրերք . որբեարի Տիկին Վիդուովիլո . Սինեօր Բլաչէնդիօ եւ, իւր սիրուն քրոջ-աղջիկներք . Մերկուրիոն եւ, իւր եղբայրը Վաղենտիանու . հօր-եղբայր Գաբրուէն, իւր կինը եւ, աղջկոնք . Հոռոգավին շնորհալի քեռապուտոր . Լիլիան, Սինեօր Վաղենտիանց, Դիվայսու իւր հօրեղբորդին . Լուչիօն եւ, խնդրումերեւ Հեղենան :

Պինտ աղւոր ընկերութիւն : (Բուռնը եր իւ որ) Ո՞ւր պիտի դան :

Ծիռ. Ահա, վերը :

Հժո. Ո՞ւր տեղ :

Ծիռ. Մեր տունը, կերակուրի :

Հժո. Որո՞ւ տունն է :

Ծիռ. Տիրոջո :

Հժո. Իրամ . ես այդ առաջուց հարցուցած ըլլալ պէտք էի :

Ծիռ. Հիմա ես հրամանոցդ առանց հարցնելու կը զրոցեմ, իմ տէրս՝ երսելի Գաբրուէտ մեծատունն է . ու թէ որ հրամանքնիդ Առնդակէսեանց աղջակից չէք նէ՝ հրամեցէք, Աստուած սիրէք, մէյմէկ զինի նետենք :

(Է՛ լունէ :)

Պէս. Գաբրուէտի այս հնասովոր խնձոյից մէջ՝ սիրուն Հոռոգավին ալ հանգիսակից է, զոր այնքան կը սիրես, ու բոլոր Վերաս նացիք գեղեցիկութեանը համար վրան կ'ըզմայլին . դնակ կ'ուզես նէ, ու հազուանշմար աշքով բաղլատէ իր գեմքը ուրիշ մէկի հետ՝ զոր քեզ ցուցնեմ, և այն ժամանակ այլ ևս կարասիդ երդերը աղուաւի կարկաչ ըլլալը պիտի՝ իմանաս :

Հժո. Քանի որ աչացս բարեպաշտ կրօնքը այս սխալմունքը կ'ընագունի, թողարկած քններս բրցերու գառնան . սակայն այս աչերը որք յաճախ ընկղմացան և բնաւ երբէք չկրցան մեռնիլ, — որ թափանցիկ հերետիկուներ ըլլան պիտի, թողարկած ապահովաշներու պէտ այլին : Իմ սիրականէս աւելի գեղցիկ . համայնատես արեւը աշխարհ ստեղծուելէ ի վեր գեռ իւր նմանը տեսած չէ :

Պէս. Ըլլա, իր քովը մէկը չեղած ատեն՝ աչքիդ աղւոր երես ցեր է . զուն զինքը՝ նիքինք կշուռին երկու աչքերուն մէջ դրած ատենը տեսներ ես . բայց այդ բիւրեղեայ նժարներուգ մէջ թող քո ատրիւորիդ մէրը և ուրիշ մէկ օրիորդի գեղեցիկութիւնը կը շուռուի այս գիշեր, զոր երբ քեզ ցուցնեմ, տեսնես պիտի հանդէս սին մէջ արձակած ճառագայթները, ու ան ատեն պիտի՝ իմանաս, որ քո աչաց անհման երեցող բանը՝ հազիւ թէ անոր ոտքը հասնելու չափ արժէք ունի :

Հժո. Երթամ պիտի, բայց ո՞չ թէ ատանկ զեղեցիկութիւն մի տեսնելու, այլ իմինիս գերազանցութեամբը տարած յաղթանակին ուրախութիւնը վայելլու :

(Է՛ լունէ :)

ՏԵՍԱՐԱՆ Պ.

Գաբրուէտի տան մէջ սննեակ մի :

Տիկին ԳԱԲՐՈՒԷՏ և ՍՆՈՒՑԻՉ :

ՑԻԿ. ԳԱԲ. Դայեկուչիք, ո՞ւր է աղջիկս, հոմ կանչէ :

ՍՆՈՒՑ. Ճշմարիտ կ'ըսեմ, երկուսանամայ կուտութիւնս վըս կայ, հիմա կանչեցի զինք, խաթնւն . (Է՛ լունէ :)

— Ո՞ւր ես, զառ

նուկ, ուր ես, աղաւնի տիկինս . — Տէր ողորմա՞ — ուր է դա
յեր մեր օրիորդը . — ուր ես, Ճիւլէդդա :

ՃԻՒԼԵԴԴԱ Է ՀՐԱՅ:

ՃԻՒԼ. Ի՞նչ է այն, ով կահչեց զիս :

ՍԿՈՒՑ. Մայրերնիդ :

ՃԻՒԼ. Հնա եմ, մարիկս, ի՞նչ կը հբամայէք :

ՏԻԿ. ԳԱԲ. Ահա ի՞նչ պիտ' ըսէի . — մնուցիչ, զուն քիչ մ'ա-
տեն բանդ գնա, մենք զաղսնի խօսք մ'ունինք . — Զէ, ինձ նայէ,
մնուցիչ, եկուր, եկուր . Հիմա միտքս ինկաւ, դուն ալ մտիկ ըրէ-
մեր խորհուրդը : Գրաես, որ աղջիկս իր ծալիկ հասակին մէջն է :

ՍԿՈՒՑ. Ճիւտակն ըսեմ, մինչև մէկ ժամ իր տարիքը կրնամ ը-
սել :

ՏԻԿ. ԳԱԲ. Գեռ տասնուշորս տարեկան չիայ :

ՍԿՈՒՑ. Տասնուշորս ակուաներէն կը բրցնէի . սակայն տասնի
կ'ընեն աշխարհիս ցաւերը, միայն չորս հատս մնացեր են . — Տասն
ու չորսին չմնաւ . քան հիմա Ա. Պետրոսի տօնին քանի՞ որ մնայ :

ՏԻԿ. ԳԱԲ. Տասնուշինդ օրէ աւելի կամ պակաս :

ՍԿՈՒՑ. Աւելի կամ պակաս՝ տարւոյն բոլոր օրերուն մէջ, Ա.
Պետրոսի ճրագալոյցը՝ զիշերը կ'ըլլայ, այն ժամանակ տասնուշոր-
սին պիտի մտնէ : Քան Շուշան ու ինք՝ — Աստուած բոլոր քրիս-
տոնէից հոգիները լուսաւորէ, — մէկ տարօք ինն քան : — Է աղէկ,
Շուշան՝ հիմա Արքայութիւնն է . Հետո ինտո՞ր աղէկ կ'երթար քան-
թայց, ինչպէս որ ըսի, Ա. Պետրոսի ճրագալոյցին զիշերը՝ տասնու-
շորս պիտի մտնէ, տասնուշը, համեցաք . քան իմ աղէկ միտքո
է : Տասնումէկ տարի առաջ, ուր է, միտքերնիդ է, քան դետա-
շարժ մի չեղաւ, ահա Ճիշտ այն ժամանակին էր որ ծծէն կտրե-
ցինք . — քան մոքէս չելներ, քան . տարւոյն Ճիշտ այն օրն էր, ինս
չու դիտէք, ես այն օրը ծծերուս պտկունքը օշինդր քսեցի ու տ-
ղաւուցին պատին տակ արեւուն մէջ նստայ, Տէրս և դուք՝ այն ժա-
մանակ Մանթուա դայեր էիք . — տեսաք, իմ խելքս ծովէ է քան,
ծովէ : Բայց ինչպէս որ ըսի, երբոք ծիծերուս պտկունքը բերանը
տուի ու լեղի համն առաւ, լեկ'զն երեխայ, երեսը գէմքը ծոմը-

կելով շուտով ծիծը բերնէն համեց ու այնքան լայաւ ճանաւաց որ
աղաւոյցը տեղէն շարժեց . ալ հարի չէ ըսելը, որ գլուխս զնաց:
Ահա այն ատենէն մինչև հիմա տասնումէկ տարի է . ինչու որ ինքնա-
րեն ոտքի վրայ կրնար կայնիլ . չէ, խաչոր, ինք իր զլխուն աս-
գին անդին ալ կրնար տըմպըլ մըմպըլ վաղվոտել . ինչու որ, օր
մ'առաջ ալ՝ ինկեր ու Ճակար ծակուեր էր . այն ատեն էրիկս —
Աստուած սղորմի հօդոյն, քան ինտո՞ր ծիծաղսէր մարդ էր քան —
աղջիկելը վեր վերցոց . Համար, ըսաւ, դուսն առանի երեսուն է վայր ի ինկ-
նէս, երբ եւելու ժողով հայ, կանէնիշ վերայ ալ աղջիկ ինինիս, համանէ
վո, Ճիշտ, համար ու Աստուած ածին վկայ, պատիկ սատանայեթիլ ճայնը
կտրեց ու համ ըսաւ քան . նայեցէք որ հիմա կատակը իրաւ կ'ըլլայ .
Ճշմարիս որ հազար տարի ալ աղջիկ, բնաւ մոքէս չեմ հաներ
քան . Անանէ վո, Ճիշտ, ըսաւ . ան չղդիկ սատանայեթին ալ՝ լայը
կտրելով համ չըսէք քան :

ՏԻԿ. ԳԱԲ. Ա՛լ կ'օդտէ, բերանդ զոյլ, կ'աղաւեմ :

ՍԿՈՒՑ. Ճշմարիս ասանի եղաւ, Տիկին . քանի որ միտքս բե-
րեմ, քան ճայնը կտրէ ու համ ըսէ ինդալէն ուրիշ բան չեմ կըր-
նար ընել որ . Հապա Ճակտին մէջ տեղը պատիկ աղջորի մի հաւ-
կթին չափ ուռեցք մ'ունենայ ու խոց մի բացուի ու ճիշիկ ճիշիկ
դալով լայ, անկեր ետք, Համ, ըսէ երիկս, երեսիդ վրայ ի ինինիս .
Ժիշնաս նէ կանիդ վրայ ալ ինինիւն է ուռելս, համ, անանէ վո, Ճիշտ,
համ, ըսէ, քան վայ զլխուս, ան ալ ճայնը կտրէ ու համ ըսէ :

ՃԻՒԼ. Դուն ալ ճայնդ կտրէ, կ'աղաւեմ, ծծմարս, կարճ ըրէ :

ՍԿՈՒՑ. Կարճ ընենք, լմնցաւ համ : Աստուծոյ օրհնենքը վրա-
նիդ ըլլայ . քան քեզի պէս ուրիշ աղջոր երեխայի մի ծիծ չտուեր
էի որ . Աստուած ասյ հարս ըլլալդ ալ տեսնեմ, ալ անկէ աւե-
լի բանի չեմ բաղձար :

ՏԻԿ. ԳԱԲ. Հապա ես ալ այդ պիտ' ըսէի : — Ճիմա ինձի ըսէի
նայիմ, Ճիւլեկ'զդա աղջիկս, ինտո՞ր ես, կարգուիլ չես ուղեր :

ՃԻՒԼ. Այդ ինձի համար այնպիսի պատիւ մէկ, որուն վրայօք
բնաւ չեմ մտածեր :

ՍԿՈՒՑ. Պատիւ ըսի՞ր, ես քո ծծմարդ չըլլայի նէ՝ պիտ' ըսէի
որ ինմաստութիւնը կաթին հետ ծծեր ես :

ՏԻԿ. ԳԱԲ. ԷՇ հիմա՝ ալ կարդուուքը նայինք . հոս տեղս վեր բռնայի մէջ քեզմէ նուազ տարեկան պատուաւոր օրիորդները արգէն զաւակաց տէր եղան . իմ հաշուովս , այդ հասակէդ աւելի պակաս եղած ժամանակս , ես քո մայրդ էի , որ հիմա գուն գետ կոյս մնացեր ես : Ես քեզի կարճ խօսք մ'ըսեմ . կտրիճ Պարփսին միտքը քեզի հետ կարդուիլ է :

ՄՆՈՒՅ. Տեսար մարդը , պղտիկ խաթունս , մարդ կ'ըսեմ , մարդ . քան զիտես որ մոմէ թափուած է , քա՞ :

ՏԻԿ. ԳԱԲ. Վերօնայի մէջ ամառուան ծաղիկ կը նմանի :

ՄՆՈՒՅ. Քա , հա , քա , սուսմինա ծաղիկ կը նմանի , զիտես որ ծաղիկ մ'է :

ՏԻԿ. ԳԱԲ. Ի՞նչ կ'ըսես , այս աղնուականը բանիդ կը դա՞ , այս զիշեր մեր խնձորքին մէջ պիտի տեսնես զինք . երիտասարդ Պարփսի դէմքին հատորը լաւ մի կարգա , և անոր մէջ զելեցկութեան զրիշով զով դրուածներէն հաճութիւն զզա . զնաղիտէ իւր ամեն մէկ ներ դաշնակառը դիմաց ծութիւնները և անո թէ ինտոր մէկ մասը մէջ կալ մասին չափակարգութիւն փոխ տուած է . սակայն այս սիրուն հատորին մէջ որքան մթին խրթնութիւններ կան նէ՝ բոլոն ալ իր աջաց լուսանցքին մէջ բացատրուած պիտի զանես¹⁾ : Սիրոյ այս թանկադին մատեանը , որու թերթերը տակալին կապուած չեն , այս տարփալին կ'ըսեմ , իր գեղեցկութեան պատիւն աւելցնեմ , միայն կազմը պակաս է : Չուկը՝ զեռ ծովուն մէջն է²⁾ . ասկէ զատ , արտաքինը՝ ներքին զեղեցկութիւնը ծածկէլու ըլլայ նէ՝ աւելի պատիւ կը զտնէ : Այս գիրքը կ'ըսեմ , շատ մարդոց աչքին փառաւ որ հանդիսացոց ոսկեզիք պատմութեանց պարծանքը՝ զոր ոսկեզին ձարմանդները զրբին մէջ կը պահեն : Ահա զուն ալ այս կերպով , իրեն հետ կարդուելով՝ իր պարունակութեանց մամակից կ'ըլլաս և ինքնինքդ ալ անկէ պակաս բան մի չես ըներ :

¹⁾ Հետ գրոց վրայ՝ բացատրութիւնները հասարակորէն լուսանցքներուն մէջ տուածք էին : Բն.

²⁾ Այսինքն , դիու որացուած չէ , որու կաշին միայն հարկառը կ'ըլլար : ո՞ւ կազմուի : Բն.

ՄՆՈՒՅ. Անկէ պակաս + քա , անկէ աւելի բան մի կ'ընէ չես ըսեր . կնիկները էրիկ մարդոցմով կ'աճին :

ՏԻԿ. ԳԱԲ. Խարճ խօսք մ'ըսէ . պիտի կրնամ սիրել Պարփսը : ՃԻՆԵԼ. թէ որ նայիլը սիրելը կը թելագորէ , սիրելու նայիմ պիտի , կ'օգաէ միայն որ իմ մէկ խօսունիկ աչք նետուածքէն աւելի , ձեր հաւանութիւնը՝ զայն թոցնել տալու զօրութիւն չտայ :

ԾԱՌԱԾ Գ Ի ՏՐԱԿ :

ԾՈՒՅ. Խաթուն , հիրերը եկան , կերակուրը սեղանն է , ձեզ կ'ըսպասեն , պղտիկ խաթունս հարցուցին , խոհանոցին մէջ հազար ու մէկ անէծք կը կարդան դայեկուհոյն , ամեն բան պարաւապատրաստ է . հիմա ես ալ սեղանին վրայ կայսելու պիտի երթամ . կ'աշղաշեմ , հրամայեցէք , ետեւս մ'ուշանաք :

ՏԻԿ. ԳԱԲ. Հիմա ետևէդ կը զանք : Ճիւլելողա , կոմու մեզ կ'ըսպասէ :

ՄՆՈՒՅ. Գնա , աղջիկ , զնա . Երջանիկ օրերուդ երջանիկ զիշեր ներ ալ աւելցներ :

(ՔՆԵՆ :

ՏԵՍՄԻՐԱԿ Պ.

Փողոց մի :

ՀՈՌՄԵԱԾ ՄԵՐԿՈՒՏԻԱԾՈՒՈՒՅՈՒՆ , ՊԵՂԱՎՈԼՈՒՅՈՒՆ , ՃԻՆԵԼ-ԱԵՐԸ ԳԻՄԱՎԱՐԱԿԱՐԱՐՈՒՅՈՒՆ , ՋԱՀԱՆ ԱԵՐԱՎԱՐԱԿԱՐՈՒՅՈՒՆ :

ՃԻՆ. Ի՞նչ ընենք . արդեօք երթալնու համար պատճառակները դանելով ներուամտութիւննին խնդրենք , թէ ենենք պարզապէս ներս մտնենք տանց ձայն հանելու :

ԳԻՆ. Ասանկ երկարաբանութեան թուականները հին են¹⁾ . մնք աչքելմիս բարակ երիզով մի կապուած կուպիտոնի պէտ ներկուած փայտի շերտէ շնուռած թաթարական աղեղնիս շալկած չպիտ՝ երթանք որ աղուաւանոյցի պէտ՝ տիկինները փափանենք մեզմէ . և ո՞չ ներս մտած ժամանակնիս՝ զրբի մը յառաջարանութիւնը սերտ ըրած

¹⁾ Այսինքն , երկույն բարակ խօսելու տաեն չէ : Բն.

ու ետեւն յուշաբերի մի կրկնախօսութիւնները լսելով՝ դողդղական ձայներով արտասանելու խօսքեր չովիա՝ բանք, այլ համարձակ ներս կ'մտնենք, ինտոք կ'ուզեն նէ այնպէս վարուին թող, մենք ալ նոյն աշքով կը նայինք իրենց, բանդ նայէ, դարձաստր մի կ'ընենք, անկէ ետք ծառայ եմ:

ՀՌՈ. Զահէ մի տուէք ձեռոքս¹⁾։ Ես պարելու մարդ չեմ։ ու թէկ ես ծանր եմ, այլ լոյսը²⁾ կրնամ տանիլ։

ՄԵՐԿ. ՁԷ, Հոռմէսս, մենք քո պարելդ կ'ուղինք, սիրելիս։ ՀՌՈ. Հաւատամ, ես չեմ ուզեր. գուք՝ կաքաւու շղուականներ ունիր նուրբ ներբանափոկավ, ես՝ կապարեայ սիրտ մ'ունիմ, որով այնպիսի կերպով գետինը զամուած եմ՝ որ տեղէս չեմ կրնար շարժիւ:

ՄԵՐԿ. Գուն տարիաւոր ես, կուպիտոնի թները փժիս առ ու մարտ դոց չկրցած սահմաններէն անդին սլացիր։

ՀՌՈ. Իր նետերէն պինտ խոր խոցուած եմ, ու իր թեթև թեթև րով չեմ կրնար ձախրել. այնպէս ալ կապուած կաշկանդուած եմ, որ վրաս ծանրացած ցաւոց վրայէն՝ թիղ մ'ալ վեր չեմ կրնար ուանալ և սիրոյ ծանր բեռնին տակ՝ կը ճնշուիմ կ'երթամ։

ՄԵՐԿ. Ասար մէջ ընկոմէլով սիրոյ վրայ ծանրութիւն ըլլալու էիր, ինք գողորիկ տալս մ'է, քեզ չկրնար դիմանալ։

ՀՌՈ. Սէրը գողորիկ աղջայ է, սէրը՝ պինտ խստաբարոյ, պինտ զմնդակ, պինտ աղմկայոյդ բան մ'է, ու փուշի պէս կը ծակծկէ։

ՄԵՐԿ. Թէ որ սէրը քեզի հետ խստութեամբ կը վարուի, դուն ալ հետոք խստութեամբ վարուե. քեզ խթէ նէ՝ դուն ալ զինք խայթիթէ, այն ատեն կը յաղթես սիրոյ։ (Յաստաներուն) Գրիմակ մի տուէք ինձ որ դէմքս մէջն անցունեմ։ (Դէմակ կը դէմակ։) Գրիմակը դիմակ դրուեցաւ. — Հոգ չէ, թող երթայ հիմա հետաքրքիր աչք մի տղեղութիւններս դիտէ. ահա հիմա խոժուադիմութիւններս զիս տեսնելով պիտի շառագնին։

¹⁾ Զահմակիր մի՝ դիմակաւորներու որ և է խուրիւրուն մէջ մտնելու իրաւունքն ունի եղեր. Բն.

²⁾ Լոյս և թեթև նոյն բառն են. Ծ. Թ.

Պէս. Քալեցէք, զարնենք, մտնենք. ու ներս մտածնուաս պէս՝ թող ամեն մէկն իր սրունքներուն վստահի։

ՀՌՈ. Զահէ մի տուէք ինձ. թող այս թեթևասիրտ խենդերը երթան և անզգայ պրտուները¹⁾ իրենց դարշապարովը խողտեցնեն. ինչու որ ես նախահայրական առածովլ մի խրատուած՝ ճրադ կը բռնեմ որ ականատես ըլլամ, — այսպիսի բարեյաջող խաղ տեսած չունէի ես բնաւ. իմ բան լմնցաւ։

ՄԵՐԿ. Խփէ, զիտեն գործակալները երբեմն ինչ կ'ըսեն՝ պարտապահանջները, անհանդարտ ընող միներ կը նմանին, ու թէ որ դուն ալ հիմա մեղ պարտապահանջի պէս անհանդարտ պիտ ընես նէ²⁾ մենք ալ (ազնուութենէդ հեռի) այս ցեսաշաղախ սիրոյ մէջն դուրս կը քաշենք զքեղ, ուր մինչեւ ականջներդ խրեր ես Քալեցէք, ցորեկ է զարձեր, հօ։

ՀՌՈ. ՁԷ, ատանկ մ'ըսեր։

ՄԵՐԿ. Զսել կ'ուզեմ, որ ցորեկ ատեն ճրադ վառելու պէս՝ ջահերը փուծ տեղ կը հատնին կ'երթան։ Մեր ըսածը աղէէ մոքի առ, ինչու որ, մեր գատողութիւնը հինդ անդամ ալ ատոր մէջ տեմնուի՝ մեր հինդ խելացի խօսքերը հաղի թէ անդամ մի տեղի կ'ունենան։

ՀՌՈ. Հիմա մեղի պէս ալ, դիմակահանդէսը երթալով՝ մտքերնիս աղէէ է, սակայն խելացութիւն չէ։

ՄԵՐԿ. Ենէ մէկն ալ ինչու համար ըսէ նէ։

ՀՌՈ. Ես այս զիշեր երազ մի տեսայ։

ՄԵՐԿ. Ես ալ տեսայ։

ՀՌՈ. Դուն ի՞նչ տեսար։

ՄԵՐԿ. Ես տեսայ որ երազատեսները շատ անդամ սուտ կը զրուցեն։

ՀՌՈ. Իրան կ'ըսես. այսու ամենայնիւ անկողնոյ մէջ քնացած անդերնին ձշմարիտ բաներ կ'երազեն։

¹⁾ Հիմա ժամանակները սովորութիւն կայ եղեր, որ սենեակներուն տախտականները պրտուեայ փիտիթներով կը ծածկեն եղեր. Բն.

²⁾ Բանս լմնցաւ, պարտապահանջ և անհանդարտ ընել դրեթէ նոյն արտասանութիւնն ունին անդշ. մէջ. Ծ. Թ.

ՄԵՐԿ. Երազիս մէջ տեսայ՝ որ Մաք¹⁾ թաղուհին հետդ է եռ դեր. այս Մաք թաղուհին՝ յաւերժահարսանց մանկաբարձն է ու քաղաքական ատենակալի մի ցուցամատն անցուցած մատանոյն առ կատի քարեն տւելի մեծ հասակով մարդու չերեար. իւր կառք՝ պինտ մանր հիգեայ երիշարներով լծուած է և ննջող մարդոց քթին մօտեն կ'անցնի. անիներուն շառաւիղները մամուկներուն երկայն սրունդներով շինուած են. վրայի ծածկոցը՝ մարախներու թեւերեն, երասանները՝ ամենափոքր սարդերու ոստայնէն. երիշարներուն վիզը կախուած մահիկեղջիրները՝ լուսնի ճառագրայթարձակ շառաւիղներէն. խարազնին կոթը՝ ծղըիտի ոսկորէն և ծայրի լարափունջը՝ անոր մորթէն. իւր կառապետը զորշազգեաց պղտըսիկ մմեղ մ'է, որ թերանինջ օրիտրդի մի մատը խածնելէ ետք բըռանուած պղտըսիկ կլորիկ լուի մի կէսին չափ ալ մեծ չէ. իւր կառքը՝ կաղնի մի փուժ կեղեն է, զոր սկիւռ ատաղձակործը հիւսնաֆած է, կամ՝ որդ վարպետն զործն է, որոնք մտքէ դուրս ժամանակի ի վեր՝ յաւերժահարս տիկնանց կառագործներն են: Ահա այս վիճակով՝ ամեն դիշեր տարփաւորաց ուղեղներուն մէջէն քառարայլ վազելով՝ կ'անցնի, որ ետքէն սիրոյ երազներ տեսնեն:

Թէ որ պալատականաց ծնկներուն վրայէն անցնի՝ իսկոյն մեծամեծ պաշտօններու վրայօք երազներ կը տեսնեն. գատաւորաց մատներուն վրայէն անցնի՝ իսկոյն իրենց վարձահատուցման վրայ կ'երազեն. տիկնանց շրթունքներուն վրայէն անցնի՝ անմիջապէս պատուըստքներ կը ցնորին. ստկայն Մաք՝ շատ անզամ, երբոր կը նայի որ ասուց շունչը քաղցրահնիներով արատաւորեալ է, բարկանայ նէ՝ խոցեր իսկ բանալով կը չարչարէ զիրէնք: Երբեմն կը հանդիպի որ արքունական անձի մի քթին վրայէն կը վազէ, ասոր վրայ, կը նայիս որ ան ալ մեծ աստիճանի հանելու անուըջ մի կ'երազէ. երբեմն ալ տասանորդն առնուած խողի մի պոչով կը դայ և խորունի քունի մէջ եղած եկեղեցականի մի քթին ծակերը կը խտղտեցնէ, անտեն ալ ուրիշ վիճակի մի հետեւելու ցնորդքներ կ'երազէ. երբեմն իր կառքը զինուորականի մի չնլիքին վրայէն

?) Խորունի?

կ'անցունէ, նայիս որ ան ալ թշնամեաց խոչափողը խողխողելու, քերդերու մէջ յարձակելու, դարանակալութիւններ ընելու, Սպանիա շինուած թուր կախուելու, մինչեւ քերանը լցուած բաժակներով կենսըմպումի զինի խմելու երազներ կը տեսնէ. ասոր վրայ մէկ մ'ալ յանկարծ թմբուկին ձայնը առածին պէս՝ վեր կը ցատուկ ու կ'արթնայ, ու այս կերպ զարհուրանօք մէկ-երկու աղօթք կը մրմրայ ու նորէն կը քնանայ: Այս այն Մաքն է, որ զիշեր ատեն ձիոց բաշերը կը բղիտէ և աղտոտ ու խառնիխուռն հերաց մէջ պարիկներու հերացցունքը կը խառնաշփոթէ, որոնք անզամ մ'որ քակուին՝ շարագուշակ գժբաղդութիւն անձ կատաղութիւնն այն է որ երբ կոյս աղջիկունք իրենց կոնկին վրայ պառկած կ'ըլլան, անոնց վրան կ'ինկին¹⁾) ու նախ ինք դաս կը տայ իրենց, որ կնիկ ըլլալու ժամանակնին՝ ինտոր պիտի գիմանան ծանր բեռի տակ: Այս է այն —

ՄԵՐԸ. Կ'օգտէ, կ'օգտէ, Մերկուտինս, հասկցանք, ոչինչ բառներ կը զրուցես:

ՄԵՐԿ. Հապաւ երազներու վրայ կը զրուցեմ, որոնք ուրիշ բան չեն, բայց եթէ անախտան ուղեղներու զաւակներ, փուժ երեակայութեան պատուղներ՝ որք օդին դոյութեան պէս նուրբ և հողմէն աւելի յորդողդ են, որ զուցէ հիմա իսկ՝ հիւսիսային սառնապատ կողմերուն վրայ իր շունչը փէլէն բարկացած՝ ետ կը փախչի ու հարաւային ցողատարափ կողմերուն վրայ կը դարձնէ իր զէմքը:

ՊԵՐ. Այդ հօվը որ կը զրուցես՝ զմեղ շատ հեռու կը ձգէ. արդէն ընթրկնին լմնցուցած ըլլալ պէտք են ու մինք ալ պինտ ուշ պիտի հասնինք:

ՀԵՐ. Վախնամ որ պինտ կանուխ է. երեւակայութիւնս ինձ զիս մես թէ կ'ըսէ, որ այս զիշերուան ինճոյից զեղսութեանց հետ դեռ աստղերուս մէջ կախուած ճակատագրիս զժբաղդութեանց աղետալի թուականը՝ գառնութեամբ սկսի պիտի, ու ցաւալի կորուտի կամ տարածամ մահուան մի պատճառաւ՝ սրտագողիս մէջ կղպուած ձանձրալի կեմներիս պայմանաժամը վերջայնին: Բայց Այս

¹⁾ Որ է մշտականը:

որոյ ձեռաց մէջն է իմ կենընթացից ուղղութիւնը, թող նաւուա
առաջաստներն ալ կառավարէ : Քալեցէք, զեղաստէր ազնուականք:
Պէս. Զարկէք թմբուկները :

(ԵՌԱՅԻՆ :)

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԳԱՍՏՈՒՆԻՑի տան մէջ սրահ մի:

Երաժիշտը պատրաստ՝ կ'ըսպասն:

ՍՊԱՍԱՌՈՐՆԵՐ Է ՀՐԱԵՆ:

Ա. ՍՊԱՍ. Թօփիկն մը է, ինչո՞ւ չյար որ սեղանը վերցնենք •
Ճողլը, պիտի փոխէ, պիտի սրբէ . Աստուած չընէ :

Բ. ՍՊԱՍ. Երբ ամեն չնորհք մէկ կամ երկու մարդոց ձեռք անց-
նէ, ու այն ձեռքերն ալ լուսուած չըլւան, անշնորհք բան մի
կ'ըլւան, ձշմարիս :

Ա. ՍՊԱՍ. Վերցուր սա յօդաթոռները, անդին տար պիտինե-
րուն գարանը¹⁾, պիտիները աղէկ նայէ չձգես չկոտրտես . կ'աղա-
ցէմ, խնամի, ինձի կտոր մի նշափաքար պահէ . նաև, զիտեմ որ
կը սիրես զիս, սա գոնապանին ըսէ որ Գերձակենց Շուշանը, Հե-
ղինէն — Անտոնը և Թօփիկը թող տայ որ ներս զան :

Բ. ՍՊԱՍ. Շուտ ըրէ, մանչ, շուտ ըրէ :

Ա. ՍՊԱՍ. Չեղ կը նային, ձեղ կը կանչեն, ձեղ կ'ուզեն, ձեղ
կը փնտուեն մեծ սենեակին :

Բ. ՍՊԱՍ. Տան ձեռք չունինք որ ամեն տեղ հասնինք : — Շուտ
ըրէք, տղայք, հա . կտոր մի ձեռքերնիդ շարժեցէք . ով որ վեր-
ջի մնայ՝ թող տան բան վերցնէ տանիք :

(Երև կը ուշունին :)

ԳԱՐՈՒՆԻՑ և այն, կանաչաներուն և գիտաւորներուն է ՀՐԱԵՆ:

ԳԱՐ. Ազնուականներ, բարի եկաք . ոտքերնին կոշկու չունեցող
տիկինները ձեզի հետ զլուխնին պիտի տաքնին . — Հա, հա, ապ-

¹⁾ Աւուն մի՝ որու վրայ պատրաստ մաքուր պիտի կ'ըլւայ և անկիւն մի կը դըր-
ուի եղէր ժամանակու: Բն.

ՀԱՅԱՍՏԱՆ ՆԻ ՃԻՒՆԵԼԵՐՆԱ

33

թիք Տիկիններ . Հիմա ձեզից ով պիտի մերժէ կաքաւելը, և այն
տիկինը որ նազապէիր կ'ընէ՝ կընամ երգում ընել որ սոքերը կոշ-
կու ունի: Խօսքերս դպան ձեզ: Բարի եկաք, ազնուականներ, ես
ալ ատենօք երեսս դիմակ անցուցի ու սիրուն օրիսրդաց ականջնե-
րուն՝ սիրաբանական հաճելի փսիսուքները ըրի . մը է հիմա այն
օրերը, անցան, անցան: Բարի եկաք, ազնուականներ: Երաժիշտու-
ներ, սկսէք նայինք: Տեղ ըրէք, տեղ բացէք, բացուցէք, աղ-
ջկունք, պարեցէք նայինք: (Երաժիշտները կը նուագին ու հանդիւս-
կոնք կը պարէն:) Ուրիշ ճրագ ալ բերէք, սպասաւորներ. սեղան-
ները զուրս հանեցէք ու կրակը մարեցէք, սրահը արդէն պինտ
տարցած է: — Երանի՛ մեզ, այս յանկարծական խնձօքն ինսուր
ուրախալի կերպով կը զուարձացնէ . չէ, չէ, նստիք, նստիք,
սիրելի Գարուլէտ հօրեղապար . ալ մը երկուքնուս ալ կաքաւելու
ժամանակն անցած է . ո՞րքան ատեն է որ դուք ու ես մէկտեղ դիւ
մակ զրուեցանք ու պարահանգէս զնացինք, մտքերնիդ է:

Բ. ԳԱՐ. Ճշմարիս որ, երեսուն տարի մ՛ըլալու է:

Ա. ԳԱՐ. Ձէ՛, ինչ կ'ըսէք դուք ալ, մէր կոչէնդիղի հարսա-
նեաց զիշերը չէ՞ր որ դիմակաւորեցանք . Հոդեզալուստը ո՛րչափ
շուտ կ'ուզէ թող զայ, երբ զալու ըլլայ՝ հաղիւ քսանուհինք տա-
րի ըլլալու է:

Բ. ԳԱՐ. Աւելի է, աւելի: իր տղան աւելի մեծ է, տէր . ես
բեսուն տարեկան մի կայ:

Ա. ԳԱՐ. Ի՞նչ կ'ըսէք . դեռ երկու տարի առաջ իր տղան ան-
շփահաս էր:

ՀՈՒ. Ո՞ր տիկինն է այն, որ նա պարասպետին թեր կը փառա-
ւորէ:

ՍՊԱՍ. Զեմ զիտեր, տէր իմ:

ՀՈՒ. Ո՛չ, ջահշերուն օրինակ կ'ըլլայ որ աւելի պայծառ վառին.
իւր զեղեցկութիւնը զիշերուան այտից վրայ այնպէս Ճառագայթար-
ձակ է, ինչպէս որ Եթեռվագցուհոյ¹⁾ մ'ականջէն կախուած թան-
կազին զոհաբեղէն ող մի, սքանչելի զեղեցկութիւն մ'ունի՛ որ

¹⁾ Երբ խափշկուհի: Բն.

հասարակ գործածութեան համար պինտ ծանր է և հասարակութեան համար՝ պինտ սուղ: Այս սիրուն օրիորդը իւր ընկերուչեաց խըմա ըին մէջ տեղ՝ երամ մ'աղուաներու մէջ ձիւնափետուր աղաւնիի պէս կ'երեայ: կեցիր կաքաւը լմնայ, և իւր կայնած տեղը միտքս պահէմ և իմ կոշտ ձեռքս երջանիկ ընեմ իւր ձեռքին դպինելով: Սիրու մինչև հիմա սէր մ'ըզգացած էր արդեօք, աշերս, երդման զանց եղիք, ինչու որ ես մինչև այս զիշերս՝ ճշմարիս զեղցիութիւն տեսած չէի:

ԴԻՊ. Սա մարդուն ձայնէն կ'իմացուի որ Մոնդակեան մ'է: — Մանչ, թուրս հնա բեր, — աս ի՞նչ ըսել է, զարշելին դէմքը անա ձունի դիմակով մի ծածկէ ու ենէ հսո զալու համարձակի, որ մեր հանդէսին վրայ ինսդայ ու պատիւը ստիլի մ'ընէ: Հիմա, մեր զերդաստանաց պատոյն ու բովանդակութեան վրայ կ'երդում ճշմարիս, որ մեղք չեմ սեպեր մէկ զարնելով զայն մուցնելը:

Ա. ԳԱՅ. Ի՞նչ կայ, ի՞նչ եղար, եղորորդի, ի՞նչ բանի հաւ մար կը կրակոսիս:

ԴԻՊ. Զօրեղբայր, սա մարդը Մոնդակեան մ'է: Լիրը հարկաւ ծալտեալ եկեր է, որ այս զիշերուան մեր ուրախազուարձ ինձոյ քին վրայ ինսդայ:

Ա. ԳԱՅ. Երիտասարդ Հոռմէոսը չէ այն:

ԴԻՊ. Կոյն ինքն, աներես Հոռմէոսն է:

Ա. ԳԱՅ. Հանդարս կեցիր, սիրելի եղորորդի, մի դպչեր իս ըեն, պինք քաղաքալար աղնուականի պէս կը վարուի չես տեսներ: ու ճշմարիս ըսեմ, բոլոր Աերոնացիք կը զովեն զինք՝ առաքինի ու կենցաղակէտ երիտասարդ մ'ըլլալուն համար: քաղքիս բոլոր հարստութիւնն ալ տային իմ տանս մէջ իր վրայ պզտիկ արատ մ'իմ ի բերել չէի տար: Անոր համար համբերութիւն ըրէ, երեսը մի բերել չէի տար: Անոր համար համբերութիւն ըրէ, երեսը մի բերել չէի տար: Անոր համար համբերութիւն ըրէ, երեսը մի բերել չէի տար:

ԴԻՊ. Պինտ աղէկ չնորհք կ'առնէ, երբ ասանկ լիրը հիւր մի կ'ըլլայ: չեմ կրամար տանիլ իրեն:

Ա. ԳԱՅ. Պէտք է որ տարուի իրեն: Հապա՛, անդէտ տղայ:

Եղ քեզ տարուի պիտի կ'ըսեմ, — բանդ գնան նայիմ: — Հսու տեղու տանուտէրն ո՞լ է, ես եմ, թէ դու դուրս ել, իրեն շես կը նար տանիլ, չէ՞: Տէ՞ր ողորմեա, հիւրերուն ու բախութիւնը տալու ուղարկ պիտի կ'ըսեմ, կ'այ: Զօրեղբայրս, ամօթ է:

Ա. ԳԱՅ. Քայլէ, Քայլէ, հաստղ լուխ ես եղեր: — այս թեթևա մոտութիւնդ ետք փոթորիի մի պիտի հանէ զլսուդ: զիտես ինչ կ'ընեմ: Տակաւին դէմ կենալու ես, մ'երկնցուներ, ատենն անց յաւ: — Ըամա աղէկ բան ըսիք, սիրելիներս: — Բանդ գնան նայիմ, գնան՝ կամ ինելօք կեցիր: — Ճրագ բերէք, ուրիշ Ճրագ ալ բերէք, ամօթ չըլլայ: — Քեզ կը ինելօքնեմ, ի՞նչ ըսիր: — Զեղ տեսնեմ, ուրախութիւն ուրախութեանց:

ԴԻՊ. Բանի համբերութիւն՝ կամակոր բարկութեանս դէմ պատահած՝ բոլոր մարմինս գող կը հանէ: Ես կ'ելնեմ կ'երթամ, բայց այս անվայիլ բռնամուծումը՝ որ հիմա անուշ կ'երեի իրեն, կընայ ետքը դառն ատելութեան մի փոխուիլ:

ՀՅՈՒ. (Ճէ-լէ-կրտպային) թէ որ անարժան ձեռքալս այս սուրբ մատունքը կը պղծեմ, աչս ամոր քաղցր ապաշխարութիւնն ի՞նչ է: — իմ երկու կարմրցած ուխտաւոր շրթունքն՝ պատրաստ կեցիր են, որ այս անհեթեթ շօշափումը՝ մեղմակորդ համբուրիս մի քառ մեն:

ԴԻՊ. Ազնիւ ուխտաւոր, ձեռքերնիդ պինտ յանցաւոր կը սեպէք, որ այս կերպովս՝ իր պարտուպատշաճ ջերմեռանդութիւնը կ'արտայայտէ: վասն զի սուրբերն ալ ձեռքեր ունին որոնց կը թուն դպչել ուխտաւորները ու թաթ զթաթի ըլլալը՝ ապաշխարամէր ուխտաւորաց երկրպագութիւնն է:

ՀՅՈՒ. Կարծես սուրբերը շրթունք չունին ինչպէս ջերմեռանդ ուխտաւորները:

ԴԻՊ. Շըթունք ունին, ուխտաւոր: բայց աղօթքի մէջ դործա ծել պէտք են զանոնք:

ՀՅՈՒ. Ա՛յ, ուրեմն, սիրուն սրբուհի, թող շրթունքն ալ ձեռք քերուն ըրածն ընեն: ահա կ'աղաւեն, չնորհցեցիք իրենց, որ չըլլայ թէ հաւատքը՝ յուսահասութեան դառնայ:

ՃԻՒԼ. Սուրբերն անշարժ կը կենան, թէե աղաշահաց ունկնդիր կըլլան :

ՃԻՒԼ. Ուրեմն մի՛ շարժիք, երբ այս կերպով շրթամբը խնդրուածոց արդիւնքը կ'ընդունիմ, ու ձերիններով մեղքս կը քաւուի :
(Պայն համբուրելով):

ՃԻՒԼ. Թողւ ուրեմն շրթունքս՝ առած մեղքելնին պահեն :

ՃԻՒԼ. Ուրեմն շրթունքս մեղքելոս առիք . այս ի՞նչ անուշաւթեամբ գործուած մեղք է . մեղքս եմ տուեք նորէն :

ՃԻՒԼ. Դուք հաշուեգրքէն կը համբուրէք :

ՄՆՈՒՅ. Խամրերնիդ ձեղ բան մի պիտ' ըսէ :

ՃԻՒԼ. Իւր մայրն ով է :

ՄՆՈՒՅ. Ձէք զիտեր, կորի՛ջ զաւակ, իւր մայրը՝ տանտիկինն է . ինտո՛ր բարի, ինտո՛ր խելացի, ինտո՛ր առաքինի խամրուն մ'է զիտէք . ես՝ կաթ տուած եմ իւր աղջկան որու հետ զրոյ կ'ընէիք . ձեղ բան մ'ըսեմ, չէ՝ — սառը հետ կարգասողը չզդշար :

ՃԻՒԼ. Գաբուլեան է . ո՛չ, թանկարին առետուր . կեանքս՝ թըշնամոյս պարսաւոր եմ մնացեր :

ՊԵ. Ելէք, երթանք, պինտ զուարձալի ժամանակն ալ հիմա է :

ՃԻՒԼ. Վախնամ, իրաւ անսանկ . անհանգստութիւնս ալ չափազանց է :

Ա. ԳԱԲ. Ձէ՛, աղնուականներ, երթալ չըլլար, կեցիք նայինք, տակաւին պղտիկ ճաշկերոյթ¹⁾՝ մ'ալ պիտ' ընենք : — Իրաւ պիտի երթանք . ինչո՞ւ համար այսքան շուտ, ուրեմն, չնորհակալ եմ աղնուական տեարք, ամեննէդ ալ մեծապէս չնորհակալ եմ . զիշեք բարի : — Ասկէց ալ քանի մի ջահ քերէ՛ք . — քալենք նայինք, երթանք պառկինք : Ա՛չ, Տէր Աստուած (Բ. Գաբուլեալովն), իրաւ որ ժամանակն ուշացեր է, երթամ հանգստանամ, քնանամ :

(Ամեն ի՛նեն բայց ՃԻՒԼ.ԵՒԴԻՍԵԿ ու ՄՆՈՒՅԶՀԵՆ :)

ՃԻՒԼ. Հնո՞ եկուր, դայեկուիսիս, ով է սա աղնուականը :

ՄՆՈՒՅ. Ծիր Տիրերիուն տղան ու ժառանդն է :

ՃԻՒԼ. Հապա այն ով է, որ հիմա դռնէն դուրս կ'ելնէ :

¹⁾ Պաղոց, գինու և աղին պղուիկ կերուխում մի : Բն.

ՄՆՈՒՅ. Մեղայ, չե՞ս զիտեր . ան ալ խելքովս երիտասարդ Բէ՛ղրուքիօն է կ'ըսեմ :

ՃԻՒԼ. Հապա այն միւսը՝ որ ետեւէն կ'երթայ ու պարել չէր ուշգեր :

ՄՆՈՒՅ. Զեմ զիտեր :

ՃԻՒԼ. Գնա, անունն հարցուր . — թէ որ կարդուած է, իիստ հաւանական է որ դերեղմանս՝ հարսանեկան անկոլինս ըլլայ :

ՄՆՈՒՅ. Անունը Հոռմէոս է . ու Մոնդակեան մ'է, որ ձեր թըշնամոյն մէկ հաստիկ զաւակն է :

ՃԻՒԼ. Իմ մէկ հաստիկ սիրովլ՝ իմ մէկ հաս թշնամոյս զաւակն է եկել . առանց Ճանցուելու պինու կանուխ տեսայ՝ բայց պինու ուշ Ճանաշեցի : Նորասրանչ ծնունդ սիրոյ, որ ատելի թշնամի մի սիրելու կը պարտաւորէ զիս :

ՄՆՈՒՅ. Այդ ի՞նչ ըսէլ է, այդ ի՞նչ խօսք է :

ՃԻՒԼ. Հիմա պարասպետի մի հետ կաքաւելու ատեն՝ իրմէ սովորած ոտանաւոր խօսքերս են :

Ներուն կը պոռան . Ճիւլեկդդա :

ՄՆՈՒՅ. Հիմա, հիմա . — շուտ ըրէ, քալէ երթանք, բոլոր օտարականները գացին :
(Ա՛նեն :)

ԴԱՍԵՐԳՈՒՔ Է ՀՐԱՆԵՆ :

Ճիւլա նախկին տարփանքն իր դագաղին մէջն է,

Ու նոր սէր կը բացուի որ իր ժառանգն ըլլայ .

Ս. ոյր վրայ սէրն լացաւ, և մեռնին աչքը չէ .

Ա. սիրոն չերեւար՝ Ճիւլեկդն սիրոյ վրայ :

Ճողէուս սիրուած է, ու նորէն կը սիրէ,

Նոյնպէս և տեսութեան կիրքէն հրապութուած .

Պապուած աղիտիցն պէտք է արտոնջ ընէ,

Սիրոն՝ յանեն կարթից գոյնայ սիրոյն քաղցր խայծ :

Ըստ որում թշնամի, չը կընար մերծ երթալ

Որ ընէ զայն խոսանմնք՝ քրս սիրոգը կը երդնոն .

Օրիորդի՝ նոյն սիրվ, քայց միջոցն չըներեր ալ .

Որ իր նոր սիրոդին հետ ընէ տեսութիւն :

Քայց կիրքն՝ թենց ուժ կը տայ, ժամանակն կը ներէ,

Որ երկու ներհակներն սիրով բարեխառնէ :

(Ա՛նեն :)

ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

ՏԵՍԱԲԱՆ Ա.

ԱՐԱՐՈՒԱԾԻ պարտէզին մօտ բաց տեղ մի,

ՀՈՒՄԱԿՈՍ Է ՀՐԱՆԵ :

ՀՅԱ. Ասկէ անդին կրնամ անցնիլ, քանի որ սիրոտ հճու է և Ե՛տ դարձիր, ապան Հողեղին, ու քը կենդրոնդ դարիր:

(Պատրին վրայէ մագլցելով՝ մես էրու վար էր շատրիւ:)

ՊԵՆՎՈԼԻՅՈ առ ՄԵՐՈՒԹՅՈՍ Է ՀՐԱՆԵ :

ՊԵՆ, Հռոմէնս, Հօրեղաօրորդի՛ Հռոմէնս :

ՄԵՐԿ. Այն խելացի է. Ճշմարիտ վկայ՝ առն զացած պառկած է: ՊԵՆ. Այն այս կազմը վագեց, ու սա պարտէզին պատին վրան ենելով ներս ցատկեց. կանչէ զինք, սիրելի Մերկուտիոս :

ՄԵՐԿ. Ոչ միայն պիտի կանչեմ, այլ և բոլոր սատանաները զրայիսը պիտի ժողվեմ հիմա. — Հռոմէնս, քմահաճութիւն, անս խելքութիւն, կիրք, ստարփառո՞ր. զոնէ հառաչանքի մի կերպարանքով երևցիր աչերնուս. զոնէ մէկ յանդ մ՞ըսէ միայն ու զոչ ըլլամ. միայն ափսոս ինձ մի սղուա. կամ, ոէրո՞ւ առանձիւնիւրի հետ զուգայանդ ըրէ միայն. մեր խնամի Ափրոդիտէին մի միայն անուշիկ խօսք մ՞ըսէ, ու իւր հաւկուր որդույն ու ժառանդին հենդնանուն մի տուր միայն, այն կարիք Ազամ Կուտիտանին որ երբ Գովիէ՛ թուա¹⁾ թագաւորը աղքատ աղջիկը կը սիրէ՛ վրան այնքան վարսկառութեամբ դիմեցուց նետը: — Զլսեր, չդնդար, տեղէ՞ն չչարծիր. ստակեր է լակոտը. երգում ձգեմ վրան. — Հռոմէնս, Հռու զալինի կենդանի աշերը սիրես, իւր բաց ճակատը սիրես, կարմրա միայլ սիրկունքը սիրես, նեղ սուքերը սիրես, շիփ-շիտակ սրունք

¹⁾ «Թագաւորն ու Աղքատ աղջիկը» անուանէ հին պարերդութեան մի կը նկատի այս պարբերութիւն: Ինը

ները սիրես ու անոր մօտ եղած տեղուանքը սիրես՝ քո բնական կերպարանօքդ մեր աչաց երեցիր:

ՊԵՆ. Թէ որ ձայնդ լու՛ պիտի բարկանայ:

ՄԵՐԿ. Ըսածներս չեն բարկայներ զինք. զիտե՞ս երբ բարկանալ պիտք էր, երբ իր սիրողին ներկայութեան տարօրինակ ողի մի հանելով կեցնէի, մինչև որ սիրողն ալ սատանաները կանչելով աներկոյթ ընել տար առջեւն: թէ որ սյսպէս ընէի՛ ինչ որ ըսէ իր իրաւունք ունենայիր. բայց ես պարկեշտ ու քաղաքավար կերպով մ'իր սիրողին անուամբը միայն կանչեցի՛ որ ինքզինք երեան հանէ:

ՊԵՆ. Քալէ երթանք. այն ինքզինք այս ծառերուն մէջ պահէց, որ զիշերուան լուութեան հետ իր մելամաղձոս բնութիւնը յարամարցնէ: Իւր սէրը կոյր է, ու մթութեան հետ լաւ. կը զուգայրմարի:

ՄԵՐԿ. Թէ որ սէրը կոյր է, նշանակէտին չկրնար դիպեյնել: Ճիմա կ'երթայ զղերենւոյ մի տակ կը նստի, ու մտքէն կ'ըսէ որ երանի թէ իր սիրողն ալ զղեար ըլլար, ինչպէս որ աղջկունք ալ իրարու հետ խօսիլ ինդալու ժամանակին մէկզմէկ զղեր կը կանչեն: — Հռոմէնս, զիշեր բարի: — Երթամ, անկողինս մտնեմ: այս բաց օդին մէջ պառկիլը ինձի համար պինտ ցուրտ անկողին է: Քալէ նայինք, երթանք պիտի:

ՊԵՆ. Քալէ երթանք, ինչու որ փուծ բան է զինք հոս տեղ մինտուելը, չեմ նայիր որ աչքերնուս երեալ չուզեր:

(Քէնան:)

ՏԵՍԱԲԱՆ Բ.

ԱՐԱՐՈՒԱԾԻ պարտէզը:

ՀՈՒՄԱԿՈՍ Է ՀՐԱՆԵ :

ՀՅԱ. Խոցերու վրայ կը խնդայ այն՝ որ բնաւ խոցուած չէ:

ՃԻՆԵԼԵԴՐԱՆ՝ վերէն՝ պատուհանէ մէջ ինչ ինւլէ:

Բայց, կեցինք նայինք. սա պատուհանին մէջ յոլացող լոյսն ինչ է. արդեօք արեւելքն է, ուրիէ Ճիւլեկղա արելը կը ծաղի: Ե՛լ,

պայծառդ արեւ, ու սպաննեւ նախանձ լուսինը՝ որ արդէն իւր ցաւ ւերէն հիւծեալ ու թալկացեալ է, նայելով որ քեղի պէս սպաշտուհին՝ իրմէ շատ աւելի սիրուն է. բայց գուն իւր պաշտուհին¹⁾ մ' ըլլար, քանի որ ինք նախանձ է, իւր վեստալեան շքաշանդերձը զոյնը նետած ու բզիկ բզիկ եղած է, զոր ինեղերը միայն կը հագնին. փարատէ զայն իրմէ: — Ո՛չ, տարփուհին է. ահ, արդեօք դիմէ տարփուհիս բլալը: Աը խօսի՛, բայց բան մ'ալ չըսեր, հոգչէ. իւր աշերը զրուց կ'ընեն, սպատականնեմ պիտի: — Խիստ յանդուն եմ եղեր, ինձի հետ չխօսիր, բոլոր երկնից մէջ երկու շողջողափայլ աստղեր զործ մ'ունենալով՝ կը թախանձեն իւր աշերը, որ մինչեւ ես դառնալին, անոնց շրջանակաց մէջ փալվլին: Թէ որ աշերը երկինքն ըլլային և աստղերն ալ իւր զլեսուն վրայ՝ կարծեմ որ իւր այտից պայծառութիւնը ամօթապարտ կ'ընէր այս աստղերը, ինչպէս որ այդալոյսը՝ զքաղը: Թէ որ աչքը երկինքն ըլլար՝ օգային տարածութեան մէջ այնպիսի արեղակնացայացայ լուսոյ ճառագայթներ պիտ՝ արձակէր որ թռչունները պիտի կարծէին թէ զիշեր չէ ու զեղգեղէին պիտի: Տե՛ս, ինտոր իւր այալ ձեռքին վրայ է կոթնցուցեր, ո՛չ, երանի՞ թէ ձեռքն անցուցած ձեռնոցն ըլլայի որ այտին դպչելու կարող ըլլայի:

ՃԻՒԼ. Ավտոս ինձ:

ՃԻՒԼ. Բան մ'ըսաւ. — Ո՛չ, խօսէ նորէն, լուսասփիւռ հրեշտակի, ինչու որ գուն՝ զլուսուր վրայ եղած զիշերուան մէջ այնպէս փառաւոր կ'երեաս, ինչպէս որ երկնից թևատարած պատղամաւոր մի՛ մահկանացուաց հիազնին ու երկնապիշ սպիտակալարձ աչաց կ'երեի, որոնք կրնկաչակ նայուածքով՝ աշերնին վեր տնկած կ'ապշին կը մինան, երբ այն ալ դանդաղաւաց ամպերը կը ձեղքէ կ'անցնի, և օգային անհուն անդնդոց մէջ սաւառնաթե կը դողի:

ՃԻՒԼ. Ա՛չ, Հռոմէնս, Հռոմէնս. ինչո՞ւ համար Հռոմէս ես. ուրացիր հայրդ ու մերձէ այդ անոնը. եթէ ոչ, թէ որ չես ու զեր երգում ըրէ որ կը սիրես զիս, ու ես ալ այն ատեն Գարու լեան չեմ:

¹⁾ Առանի կամ Արակեմոց քրմահի: Բն.

ՃԻՒԼ. (Ձէ կ'ողո՞ւ) Ալ ասկէ աւելի բան լսե՞մ, թէ ասոր պատահանան տամա:

ՃԻՒԼ. Միայն անունդ է՝ որ ինձ թշնամի է. — գուն զրեթէ դու ինքդ ես ու ոչ թէ Մոնդակեան: Ու Մոնդակեան ըսածդ ալ ինչ է, ոչ ձեռք է, ոչ տոք, ոչ բազուկ է, ոչ գեմք և ոչ մարդոյս մարմայն վերաբերեալ ուրիշ մէկ մասն է: Ա՛չ, ուրիշ անուն մ'առ, անունի վրայ ի՞նչ կայ: Մեր վարդ ըսած ծաղիկը, ուրիշ որ և է անուն մի այսինք, ոչ ասպաքէն գարձեալ իւր անուշահաս բուրմունքը պիտի ծաւալէք: Ասանի ալ Հռոմէսուը՝ Հռոմէսու կոչուած ըլլար, առանց իւր անունը, իւր վրայ ունեցած սիրելի կատարելութիւններէն զրկուած չպիտ' ըլլար. — Հռոմէնս հանէն նետէ անունդ, և այդ անուան տեղ՝ որ քու և ոչ մէկ մասդէ ինքողինքս բոլորովին առ:

ՃԻՒԼ. Ես խօսքդ կը բոներմ, զիս միայն տարփաւորդ կանչէն, ու նորէն մկրտաւած կ'ըլլամ, ալ այսուհետեւ ես Հռոմէսու չեմ:

ՃԻՒԼ. Բայց գուն ինչպէս մարդ ես, որ զիշերուան մթութեան մէջ կաղ ի կաղ կը զաս և զաղոնիքս բերնէս կը կորզես:

ՃԻՒԼ. Անունով չեմ զիտեր թէ ինչպէս իմացնեմ թէ ով եմ. անունն սիրելի սրբուհիս, ինձ ատելի է, ըստ որում բեղ թշնամի է. զրուած, ըլլամ՝ այդ խօսքը պատուի պիտի:

ՃԻՒԼ. Ականջներս՝ գեռա այդ լեզուին արտասանութեան հարիւր խօսքերն անկամ չկլացին. սակայն ձայնը կը ճանաշեմ. զուն Հռոմէսու չեմ ու Մոնդակեան չեմ:

ՃԻՒԼ. Ո՛չ մէկն եմ և ոչ մէկալը, թէ որ երկուքն ալ քեզ հանելի չերեւար, սիրուն հրեշտակի:

ՃԻՒԼ. Ըսէ ինձ, ինտոր հսս եկար, ու ինչ բանի համար, պարտէզին պատերը բարձր են ու մագլցելն ալ գմուար, թէ որ հոդ տեղ քեզ ազգականներէս մին տեսնէ և ով ըլլալի իմանայ՝ զիտանս որ մահդ անհրաժեշտ է:

ՃԻՒԼ. Սիրոյ թեթեաթուիչ թեերով այս պատերուն վրայէն անցայ. վասն զի, քարեղէն կոսարները՝ սիրոյ արդելք չեն կրնար ըլլար, ու ինչ որ սէրը կարենայ ընել՝ դարձեալ սէրն է որ զանընելը փորձելու կը համարձակի, անոր համար, աղդականներդ ինչն կրնար արդելք ըլլար:

ՃԻՒԼ. Թէ որ քեզ հսս տեսնեն, կ'ըսպաննեն զքեղ։

ՃԻՌՈ. Ափան։ ինձի համար՝ աւելի քո աչքէդ վտանդ կայ, քան թէ իրենց քանի հատ սուրերէն։ միայն անդամ մ'անուշութեամբ նայիս ինձ՝ իրենց թշնամութեան դէմ զիս կը զինես։

ՃԻՒԼ. Բոլոր աշխարհք ալ տային՝ քեզ հսս տեսնելնին չէ ուզեր։

ՃԻՌՈ. Իրենց աչքին չերեալու համար՝ զիշերուան վերարկուս վըս րաս առած եմ. միայն թէ գուն սիրէ զիս, ու թող անոնք զիս հոս դանելու ըլլան. նախաղաս կը սեպեմ որ իեանքո՞ իրենց ատելու թեամբ աւելի աղէկ վերջ մ'ունենայ, քան թէ քո սէրէդ զըր կուած՝ մահս երկարածղի։

ՃԻՒԼ. Ո՞վ առաջնորդեց քեզ որ այս տեղս զանես։

ՄՆՈՒՅ. ԱՇ. Գիպալտոս, Գիպալտոս, իմ ամենասիրելի՛ բարձիամ։ ահ, անու չի՞ Գիպալտոս, ազնիւ երիտասարդ։ ես քո մահց տեսնելու համար պիտ ապրիմ եղեր։

ՃԻՒ. Այս ինչ փաթորիկաձայն ալալակ է որ հակասական եղանակով կը մըրթի։ Հռոմէոս սպանուեցան ու Գիպալտոս մեռած։ մեռած ստուիս իմ ամենասիրելի քեռորդիս ու աւելի սիրելի ամռանին։ Արեմն, զարչուաճան փող, հնչեցնու վերջին դատաստառնի եղանակ։ այս երկու քն երմալին ետք այլ ևս ով կ'ապրի։

ՄՆՈՒՅ. Գիպալտոս զնաց, ու Հռոմէոս աբորուեցան։ Հռոմէոս որ Գիպալտոսն սպանեց, աքտորուեցա։

ՃԻՒ. Վահ, Ըստամծ։ — Հռոմէոսին ձեռքը Գիպալտոսին արինը թափեց։

ՄՆՈՒՅ. Թափեց, թափեց։ հապա, այս ինչ սե օր է եղեր։ թափեց հապա։

ՃԻՒ. Ա՛վ ծաղկազարդ գեմքով պահուած օձ սիրտ։ երբէք վիշշապ մ'եղած է որ ասանկ գեղակելծ խոռոչչ մի մէջ բնակի։ շնորհայց բռնաւոր։ հեցշատականիլ սատանայ։ աղաւնեփետուր աղուա, դայլախողխող գառն։ երկնատեսիլ անարզելի՛ էակ։ դու ինքինիք ներհակերեւ, գատապարտանալ սուրբ, պատկառելի՛ վատ։ — Ա՛վ բնութիւն։ ինչ բան ունիս գծոխոց մէջ, երբ այսպիսի հրաշագեղ մարմնոյ՝ մահկանացու արքայութեան մէջ սատանայի մի հոգին պարփակել կը տաս։ երբէք տեսնուած է այսպիսի գիրք մ'որ ասանկ փառաւոր կազմուածք մ'ունենար ու մէջն այսպիսի խորը նիւթ պարունակէր։ Ակսո՛ս, նենդութիւնն ալ ասանկ շքել պարափի մի մէջ բնակիլ պէտք է եղեր։

ՄՆՈՒՅ. Մարդոց՝ վստահութիւն չըլլուիր, ոչ հաւատարմութիւն

ունին, ոչ պարկեցաւթիւն, ամենքն ալ երգմնազանց են, խռումնադրուժ են, նենդաւոր են, խաբերայ են։ — ԱՇ, ո՞ր է մարգս, մանչ, քիչ մի կենօղի բնէ։ — Այս ցաւերը, այս թշուառութիւնները, այս վիշտերը տեսար, բոլոր ասանք են որ զիս կը պառացնեն։ — Երեսդ սեաւ ըլլայ, Հռոմէն։

ՃԻՒ. Կեզմակ չորսայ որ վրան ատանկ բան չըսես։ ինք երեսը սեաւ ելնելու համար ծնած է։ ամօթը՝ կ'ամշնայ անոր ճակատին վրայ երեալու, ինչու որ ճակատը՝ ամռու մէկ, որ պատիր՝ պասակ առնելով կը թագաւորէ իրքն միայի ինքնակալ ափեգերական աշխարհի։ ԱՇ, ինչ անբանուհի եմ որ զինք կը յանդիմանեմ։

ՄՆՈՒՅ. Զեր գեռորդին սպաննողին համար բարի կը խօսիք։

ՃԻՒ. Ի՞նչ կ'ուզես որ ամուսնոյս համար չար խօսիմ։ ԱՇ, ինեղ ամուսինս, որ լեզուն կրնայ զովել անոնդ, երբ ես միայն երեք մամուսան կաղակցուհիք՝ անուանարկ կ'ընեմ զայն։ — Սա կայս, անօրէն, ինչու համար սպաննեցիր քեռորդիս։ բայց եթէ ոչ անօրէն քեռորդիս՝ ամուսինս սիփու ըստաններ։ Ե'ա դարձիք, անխոչեմ արտասուք, ես դարձիք նորէն առ սկզբնաբուջն վահական ձեր։ ձեր հարկատու կաթիլները՝ թշուառութեանց կը վերաբերին, զորս գուք սխալմամբ ուրախութեան կը նու իրէք։ Ամուսինս դես ողջ է, զօր Գիպալտոս մեռցնել կ'ուզէր։ ու Գիպալտոս մեռած է, որ զամուսինս մեռցնել կ'ուզէր։ ասկէ աւելի միիթարութիւն կ'ուզեմ։ ուրեմն ի՞նչ բանի համար պիտի յամ է։ մուշերեց պիս, ինսո՞ր մաքէս հանեմ պիտի զայն։ այնպիսի կերպ պոլ յիշողութեան մէջ տպաւորեցաւ, որպէս թէ գտատագարարացան ժանտագործութեանց յիշողութիւններն ըլլային գորս յանցաւորք մտքերնեն չեն կրնար հանել։ Գիպալտոս՝ մեռած, ու Հռոմէոս առողջութեանցաւ։ այս առողջութեանը, միայն մէկ առողջութեան խօսք՝ տասն հազար Գիպալտոսներու կորուսաէն աւելի գառն է։ Գիպալտոսի մահը բառական էր, թէ որ թշուառութիւնս անով վիրշանար, բայց թէ որ գտանակուիծ թշուառութիւնները ժախորդարար մէկը մէկակին ետեւ կը գտն, և որիշ ցաւոց յաջորդութիւնը կ'ախորժեն, ինչու համար — Դէպալոս մեռած լուելն ետք

Հայրդ, մայրդ և կամ երկնքը մէկէն մեռանը չյարեց, որով զիստ սովորական ողբակոծութեան մի մէջ պիտի ձգէր միայն ։ Սակայն, Դիպալուստ մեռաւ ըսելէն ետք, ուամկօրէն և անխոհեմաբար շառա մեռա աւտորեցաւ — ըսելը, այս խօսքը միայն հայր, մայր, Դիպալտոս, Հռոմէսս, Ճիւլիէդգա, ամենք սպաննուեցան, ամենք մեռան ըսել է. — Հռասնեաւ աւտորեցաւ. — Մահ խօսքին մէջ՝ վերջ մի, սահման մի, չափ մի, կուպար մի չկայ. խօսքիրը՝ կարող չեն երբէք բացատրել այս դժբաղդութիւնը. — Դայեկուհի, ուր են հայր ու մայրս :

ՍԿՈՒՅ. Դիպալտոսի մեռելին վրայ կը լան ու կ'ողբան. քովերնին կ'երթաք. թէ որ կ'ուղեք տանիմ ձեզ հան :

ՃԻՒՅ. Թող իրենց արտօտ քներով անոր վէրբերը լուսն. երբ արտօտ քնին չորնայ՝ իմիններս պիտի ըսկին հօսիլ Հռոմէսսի աքսորման համար : Վերցնուր սա չըսանները : — Խեղճ առասաններ, դուք ալ ինձի պէս խաբուած էք, ինչու որ Հռոմէսս աքսորուեցաւ, զնեզ՝ անկողինս առեանգելու համար շինեց. բայց ես՝ կոյս աղջիկ, կուսարի պիտի մեռնիմ: Քայլեցէք չըսաններ, քայլէ դայեկուհի. ես՝ իմ հարսանեկան առապասս մմնեմ ու մահուան՝ և ոչ թէ Հռոմէսսի հետ կուսապղծուիմ:

ՍԿՈՒՅ. Սենեակնիդ քաշուեցէք. ես հիմա Հռոմէսսը կը զանեմ որ կայ միսիթարէ զձեզ. — ես աղէկ զիտեմ ուր ըլլալը : Լսեցիք. այս զիշեր Հռոմէսսի հօս պիտի գտնուի. ես հիմա քովը պիտի երթամ. ինք՝ Հայր Լարենտիոսի խուցը սպահուած է :

ՃԻՒՅ. Աղէ, զաթի զինք, ու սա մասնին իմ օրինաւոր կողակացիս տաւր և աղաչէ զինքն որ դայ վերջին բարել տայ ինձ :

(ՀԵՆԵՆ:)

ՏԵՍԱՐԱՆ Պ.

Հայր ԱՅԻՐԵՆՏԻՌՈՍԻ խուցը :

Հայր ԱՅԻՐԵՆՏԻՌՈՍԻ ՀՌՈՍՄԵՍՍ և ՀՐԱՅԻ:

Հ. ԱՅԻ. Յառաջ եկաւր, Հռոմէսս. յառաջ եկուր, վշատեալ մարդ. մարմաքը անդամոցդ սիրահարեր է, և դուն ալ դժբաղդութեանց հետ ամռանցեր ես :

ՃՌՈ. Ի՞նչ նոր լուր կայ, տէր հայր. իշխանն ի՞նչ կերպ դաստապարտութիւն ըրեր է : Ի՞նչ տեսակ ցաւեր կան գեռ, որք հետաքարեկամութիւն ընել կ'ուզեն և զօրս բնաւ չեմ ճանաչեր ես տակաւին :

Հ. ԱՅԻ. Այդ քո ճախորդ վիճակիդ հետ սինտ ընտանի, սիօ բելի որդեակ. իշխանին տուած գատավձառոյն լուրը տամ քեզ :

ՃՌՈ. Իշխանին գատավձիրն ալ գատաստանի օրէն ի՞նչ պակատեղ ունի նայինք :

Հ. ԱՅԻ. Այնիէ աւելի դիւրըմբէր գատապարտութիւն մի վախաւութիւնուն ու աքսորանք. Աստոծոյ սիրոյն համար, — մահ ըստ սարք. ինչու որ աքսորը իր երևոյթով, մահուանէ շատ ու շատ աւելի սոսկալի է, — աքսորանք մ'ըներ սասր :

Հ. ԱՅԻ. Զահ, աքսորանք. Աստոծոյ սիրոյն համար, — մահ ըստ սարք. ինչու որ աքսորը իր երևոյթով, մահուանէ շատ ու շատ աւելի սոսկալի է, — աքսորանք մ'ըներ սասր :

Հ. ԱՅԻ. Դուն այս տեղէն Վերոնայէն աքսորուած ես. համբէրէ, ինչու որ աշխարհք լայն ու ընդարձակ է :

ՃՌՈ. Վերանայի պայինսպնէրէն զորս աշխարհք չկայ, կայ նէ՝ քաւարան, տանջանք և նյոն ինքն դժոխն է. Ասկէ քշուիլը աշխարհէ քշուիլ ըսել է, ու աշխարհիս աքսորանքն ալ մահն է, — ուրեմն, ըսել է որ, մահուան անունը սիալ է առնուեր. մահ հըն աքսորանք է ըսես, զլուխս սսկեղին կայինով կը կարես ու իմ կեանքս զբաւող հարուածին վրայ կը ժպախի :

Հ. ԱՅԻ. Ո՛վ մահայու մեղք. ո՛վ ապաշնորչ ապերախտութիւն. քո յանցանքդ է որ մեր օրէնքը մահ կ'անուանէ. սակայն բարեգութ իշխանը, քեզի կողմանսէր ըլլալով օրէնքը ոտքին տակին առաւ ու մահուան այն անհաճոյ խօսքը՝ աքսորանք զարձուց : Գիտցած ըլլալը որ վրադ մեծ զթութիւն ցուցոց, բայց խելքդ չզդար որ :

ՃՌՈ. Տանջանք է, ոչ թէ զթութիւն. երկինքն հսս է, որ գիւլեէդգա կը բնակի. և հօս տեղ, անսակ երկինքի մի մէջ, ամեն կատու, շուն, պղտիկ մլները և ամեն անպիտան բաները, ապրին և իւր երեսը տեսնեն, ու Հռոմէսս չկարինայ տեսնել : — Գիշալէզ Ճանձերը Հռոմէսսին աւելի արժողութիւն ունին, աւելի պատուաոր վիճամի ունին, աւելի թանկաղին կեանք ունին, որ երթան սիրելի Ճիւլիէդգայիս ձեռքին հրաշարեղ Ճերմկութեան վրայ

կայնին ու անմահական օրհնութիւններ գողնան իւր շրթունքներէն, որոնք իրենց կուսական և անրիծ ողջախոհութեամբը, մէկզմէկու չետ համբուրուելուն յանցանքը միայն՝ մտածելով՝ առաւել ևս կը կարմրին, ու Հոռոմէու չկարենայ, համ. ինչո՞ւ, ըստ որում աքսորուած է: Ճանձերն այս բաները կարենան ընել ու ես ասկէ չեռուանամ, համ¹⁾): անոնք՝ ազատ ըլլասն՝ ու ես աքսորուած, համ: Տակաւին կընաս համովել զիս որ աքսորուիլը մահ չէ: Պատրաստած թղյն չունէիր, պինտ սայրահատու գանակ՝ չունէիր, և կամ յանկարձահաս մահուան ուրիշ միջոցնի չէիր դիմեր, որ երբէք այս քան անձունի չըլլային ու ինծի տայիր, քան թէ — աքսորուած ես ըսելով՝ զիս մոցնէիր: Աքսորուած, այդ խօսքը՝ գժոխոց գատապարտեալ հոդիները գործ կ'ածեն և անոնց կաղկանձիւններուն մէջ յարդ ունի, հայր պատուական: Այդ ինչպէս սիրտ ունիս եղեր, գուն՝ որ եկեղեցական՝ պիտ՝ ըլլաս, հոդերը խօստվանահայր ես, մեղաց թողութիւն կը տաս ու զիս բարեկամիդ տեղ կը դնես, որ այդ — աքսորանք խօսքով հոգիս բերանս կը բերես:

Հ. ԼԱԽ. Խենդ, փախուկ մարդ, իմ մայիկ ըրէ որ քեզ բան ըլլաս:

ՀՌՈ. Զըլլար, չըլլար. նորէն աքսորանքի խօսք պիտի բանաս:

Հ. ԼԱԽ. Ես քեզի զէնք պիտի տամ, որ անով ինքինիք այս խօսքէն պաշտպանես. փիլխոփայութիւնը, ձախորդութեանց դէմ այն խիստ քաղցր կաթը՝ քեզ կընայ միփթարել, թէկ աքսորանքն իսկ ըլլաս:

ՀՌՈ. Գարձեամ աքսորանք: — Տար կախէ փիլխոփայութիւնը, միայն թէ, թէ որ փիլխոփայութիւնը ձիւլեկդղա մի կընայ ստեղծել, քաղաք մի կընայ տեղափոխել, իշխանի մը դատավճիռը գերաշջել նէ՝ այն ուրիշ խօսք. եթէ ոչ, օգնութիւն չկընար ընել, առ ջեր չկընար առնել. կարճ ըրէ:

Հ. ԼԱԽ. Ա՛հ. հասկցայ հիմա, խենդերն ականջ չեն ունենար:

ՀՌՈ. Խնառը ունենան, երբ խելացիներն աչք չունին:

Հ. ԼԱԽ. Կեցիր. քո վիճակիդ վրայօք բանավիճիմ քեզի չետ:

¹⁾ Վառամ ու հերտնու, նոյն արտասանութիւնն ունին Անդլ մէլ: Յո, թ.

ՀՌՈ. Քո չզգացած բանի վրայ՝ չես կրնար իմաստասիրել. թէ որ ինծի պէս երիտասարդ ըլլայիր, Ճիւլեկդղան սիրականդ ըլլար, ժամուան մ'ամուսնացած ըլլայիր, Դիպալտոս մ'ըսպաննած ըլլայիր, ինծի պէս սիրահարութիւնէ շուարէիր ու ինծի պէս ալ աքսորուած ըլլայիր՝ այն ժամանակ կընայիր դատողութիւն ընելով խօսիլ, այն ժամանակ մազերդ կը վետորտէիր ու ինծի պէս հիմա գետին կը փուռէիր՝ որ ապառնի գերեզմանիդ չափն առնես:

Հ. ԼԱԽ. Ո'տք ել. գուռը կը զարնեն. պահուէ, սիրելի Հռումէսու:

ՀՌՈ. Ձէ, միայն թէ, այս սիրտ խօթացնող հառաջանաց արտաշնչութիւնները՝ մառախուղի պէս թանձրանալով, զիս փնտոող աշաց առջեւն պահէն:

Հ. ԼԱԽ. Ձէմ լսեր, ինտոր կը զարնեն: — Ո'վ է այն: — Հռումէնս, ո'տք ել. պիտի բոնուիս: — Կայնէն նայիմ. ո'տք ել: Վաղէ աղօթարանս մոնիր: (Նորէն կը զարնեն) Հիմա, հիմա: Ողորմած Աստուած. այս ինչ կամակորութիւն է: (Նորէն կը զարնեն) Եկայ, եկայ: Ո'վ է ասանկ պինդ զարնողը: Որմէ կը զաք: Ի՞նչ կ'ուզէք:

ՄՆՈՒՅ. (Նորէն) Բացէք, բացէք որ ներս զամ ու պատճառը հասկցնեմ ձեզ. Ճիւլեկդգա տիկնոջս կողմէն եկած եմ:

Հ. ԼԱԽ. Ուրեմն, բարի եկար:

ՄՆՈՒՅՏՈՒ կը հրակ:

ՄՆՈՒՅ. Ա՛հ, աէր հայր, Աստուածոյ սիրոյն համար, ըսէք ինձ, նէր հայր, ուր է տիկնոջս նոր փեսայն, ուր է Հռումէսու:

Հ. ԼԱԽ. Ահա զետնին վրայ պառկեր է, իւր թափած արտսուքը նէրէն դինովցած:

ՄՆՈՒՅ. Ա՛հ. այս ալ Ճիշդ տիկնոջս վիճակն ունի. այս ալ անոր վիճակին մէջն է:

Հ. ԼԱԽ. Ո'վ գժբաղդալց համակրութիւն. ո'վ խոճալի հանդամանքակցութիւն:

ՄՆՈՒՅ. Այն ալ Ճիշդ ասոր պէս պառկեր է. կ'ողբայ ու կը լսյ, կը լսյ ու կ'ողբայ. — ո'տք ելէք, ո'տք ելէք, ո'տք ելէք, սրտոտ մարդ ելէք. Ճիւլեկդգայի սիրոյն համար, իւր անուշիկ սիրոյն համար:

մար, ուտք ելեք ու կայնեցէք. այդ ի՞նչ յուսահասութեան ծայրն էք հասեր:

ՀՌՈ. Դայեկուհի:

ՄՆՈՒՅ. Ա՛Հ, տէր իմ, ա՛Հ, տէր իմ: — Է՛, ի՞նչ հասկցաք, արոնց ամենաւ վերջը մահ է ու է:

ՀՌՈ. Ճիւլեկդայի խօսքն ըրիք. իստոր է. ծեր մարդասպանի մի տեղ շըսեպեր զիս, որ մեր երջանկութեան մանկութիւնը՝ իրեն պինտ մօտ աղջականին արեան ներկովն արատաւրեցի: Խնք ո՞ւ է. իստոր է. երեսը պահած ափկինս մեր երես չունեցող սիրոյն վրայ ի՞նչ կ'ըսէ:

ՄՆՈՒՅ. Ափսոս, ինք բամ մի չըսեր, տէր իմ, այլ անդադար կը լսյ ու կ'ողաց. մէկ՝ անկողնյն վրայ կ'ինկնի, մէկ՝ կ'ենէ յանակարծ ու Գիպալտոս կը պոռայ, ու Հոռոմէոս կահչելով նորէն վար կը փոռի:

ՀՌՈ. Արագէս թէ անունո՞ թնդանօթի մահահասոյց բերնէն ելած նետուածք մ'ըլլար որ զինք մեռցնէր, ինչպէս որ այդ անուան անիծեալ ձեռքն իւր աղջականը մեռցոց: — Ո՛Հ, ըսէ ինձ, հայր պատուական, ըսէ նայիմ, այս մարդուց ո՞ր անպիտան անդամին վրայ կը բնակի անունս, ըսէ, որ ցիրոցան ընեմ այն ատելի բնակարանը: (Սուրբ Գոլելուն):

Հ. Ա. Կեցուր յուսահասած ձեռքդ, մարդ ես դու, ի՞նչ ես, կերպարանքդ կ'արտայսյտէ որ մարդ ես, այսու ամենայնիւ, կանցից լացեր ունիս և վայրենի շարժուածքդ՝ զազանի մ'անաօնական կատութիւնը կը ցոյցնէ. զուն որ ըստ երկութիյ մարդ ես, և ըստ աներեւթից՝ կին, և ըստ երկացունց երեսութից՝ անյարմարերև անբան՝ շուարեցացիք զիս, սուրբ կարգս վկայ, ես գքեղ հեռ զաբարոյ խառնուածք ունեցող անձ մի կը կարծէի: Գիպալտոսը մեռցնելդ բաւական չէ՝ հիմայ ալ ելեր ինքզինքդ պիտ ըսպաննես, որ նոյն հետայն սրտիդ մէջ բնակող հարսնակինդ ալ մեռցուցած ըլլաս, վրադ անիծական նախատինք բերելով: Ինչո՞ւ համար երկնից ու երկրի նախատինքը ծննդեանդ վրայ կը բերես, քանի որ ծնունդը, երկինքն ու երկրը՝ երեքն ալ քո վրայ ամիգուածած են, որոնց բոլոր մէկէն կորուսիւթ կ'ողին ։ Ամօ՛թ է ։ գուն

քո անձդ, սէրդ ու խոհեմութիւնդ ամօթասպարտ կ'ընես, որպէս թէ վաշխակէր մ'ըլլայիր, որ ամեն բանդ առաս ըլլալով՝ անոնց և ոչ մէկին օրինասոր գործածութիւնը չուզէիր, որոնք քո անձդ, սէրդ և խոհեմութիւնդ կրնային մշակել, քո ազնիւ անձդ՝ որ մամաձյլ արձան կը նմանի, իւր այրավայել կորովութիւնը կ'անարդէ: Քո անզին սէրդ՝ զոր երգմնեցար, կեղծարտաբար կ'երգմնազանցես, քո սիրականիդ մահուան պաաճառ ըլլալով՝ զոր խանդակաթ սիրելու խոսացար: Քո խոհեմութիւնը՝ որ այդ անձին և սիրոյդ զարդարանին է, երկուքին վարմանց մէջն ալ կ'անշնորհի, որպէս թէ անշնորհը զինուորի մի նման վառօգամանին ձեռացդ. մէջ անդիտութեամբ կրակ կը տաս և զուն քո զէնքերովդ ինքպինքդ յօշատել կ'ուզես: Ի՞նչ կ'ընես, մարդ, խելքդ զլուխդ ժողվէ, Ճիւլեկդադ ո՞ղջ է, որպ անհամեմատ սիրոյն համար վերջերս քիչ միաց որ պիտի մեռնէիր, տեսար հիմա, որ երջանիկ ես: Գիպալտոն՝ զքեղ մեռցնել կ'ուզեր, բայց գուն՝ Գիպալտոսը մեռցուցիքը, տեսար որ գարձեալ երջանիկ ես: Օրէնքը՝ որ մահ կ'ըսպաւար քեղ, Տեսդ բարեկամանալով, մահը պասորանքի յեղաշրջեց. այս ալ քեզի երջանկութիւն մ'է: Խուռն օրչնութիւններ զլիսուդ վրայ կը տեղան, երջանկութիւնը՝ իւր ամենէ փառաւորացարդ հպտանօքը զքեղ կը յարգասիրէ, բայց գուն՝ բնութիւնն աւրուած ու երես առած աղջիկի մի պէս բաղդիեդ ու սիրոյդ վրայ կը թթուագիմես. զգոյշ կեցիր, զգոյշ կեցիր, ինչու որ թշրւառականներն այս կերպով կը մեռնին: Գնա վաղէ սիրականիդ քով, ինչպէս որ խօսք ըրեր էիք, սենեակն ելիք, վաղէ ու միսիթարէ զինք. բայց ինձ նայէ, մինչև պահապաններուն հսկելու ժամանակը մի կենար, ինչու որ ետք Մանգուա չես կրնար երթալ, որ որ պիտի կենաս, մինչև որ ժամանակը զայ որ ամունութիւնդ հրապարակալուր ըլլայ, Ճեր գերգաստաններն հաշտուին, իշխանին ներողութիւնն աստանամք, որով քեղ նորէն ետ կանչեմք և հարիւր հազար անդամ աւելի ուրախութեամբ ետ գառնաս քան որչափ արտմութեամբ որ պիտ՝ երթաս: — Գայեկուհի, զուն առջեկն դնա: Խաթունիդ բարե ըրէ, ու պատուիրէ որ բոլոր ընտանիքը կանուխիկ անկողին մոցնէ, որու պինտ հարկաւորութիւն ունենալ

պետք են, իրենց կոկծալի ցաւոց պատճառաւ. Հռոմէոս ալ հիմա ետք կը համի:

ՄԱՅԻՍ. Աստուած. բոլոր զիշերը հօս նստիլ կ'ուզել սիրտս, ջշմարիտ, որ բարի խրամ մտիկ լնեմ. ահ, նայէ ինչ առդէկ բան է դրել կարդալը: — Տէր իմ, ձեզի համար՝ պիտի զայ ըսեմ տիկնոջա, անանկ չէ:

ՀՌՈ. Այս, անանկ ըրէ, և ըսէ սիրականիս որ զիս յանդիմանելու պատրաստի:

ՄԱՅԻՍ. Ասէք սա մատնին, տէր իմ, քովս ձգեց որ ձեզ տամ՝ վաղեցէք, տէր իմ, շնուր ըրէք, ինչու որ ժամանակն ուշանալու վրայ է:

ՀՌՈ. ԱՇ, ինտոր սիրտս հանգչեցաւ ու սփոփեցայ ասովէ: Հ. Լ. Ա. Գնան նայիմ. զիշեր բարի: Նաև ինձ նայէ. քո բաղդդաւ երջանկութիւնի սա բանէն կախեալ է որ, կամ պահապաններուն հսկելու ժամանակէն առաջ պիտի միկնիս, կամ առտուանց պինտ կանուխս կերպարանած պիտ ասկէ պիտի փախչիս: Մանդուադնա, նստէ. երբեմնակի պաշտօնեայդ հօս զալու ժամանակ, ես կը զանեմ զինք և քո բարելաւ ութեանդ նկատող իւրաքանչիւր բարերադլ յաջուր թիւնները կ'իմացնեմ իրեն որ զայ քեզ լուր տայ: Զեր քր տուր նայիմ. ուշացեր է ժամանակը. Տէր ընդ քեզ, զիշեր բարի:

ՀՌՈ. Թէ որ հաճութիւնն դերադանցող ուրախութիւն մ'իս իր քով չկանչէր, սրտիս ցաւ պիտ' ըլլար ասանկ արտորանօք քեզմէ զատուիլս. ծառայ եմ:

(Ե՛ՆԵՆ:

ՑԵՍԱՐՅՆ Պ.

ԳԱՐԱՌՈՒԼԵՏԻ տան մէջ սենեակ մի:

ԳԱՐԱՌՈՒԼԵՏ, ՏԻՎԻՆ ԳԱՐԱՌՈՒԼԵՏ և ՊԱՐԻՍ և Բուհն:

ԳԱՐԱՌՈՒԼԵՏ, ՏԻՎԻՆ ԳԱՐԱՌՈՒԼԵՏ և ՊԱՐԻՍ և Բուհն:

որքան որ ես կը սիրէի: Ի՞նչ ընենք, ամենքս ալ պիտի մեռնինք: — Ժամանակը շատ ուշ է, այս զիշեր վար չիջնար: Ճշմարիտ կ'ըսեմ, որ ձեր աղին ընկերութիւնը չըլլար, ասկէ ժամ մ'առաջ անկողինս մտած կ'ըլլայի:

ՊԱՐԻՍ. Այս դժբաղդութեանց ժամանակները՝ խօսք-կապ մ'ընելու միջոց չեն տար, զիշեր բարի, Տիկին. սիրոյ բարեներս մատուցելք ձեր աղջկան:

ՏԻԿ. ԳԱԲ. Գլխուս վրայ. վաղն առտուխ իր միտքը կ'իմանամ, ինչու որ այս զիշեր սիրալ կարուած ըլլալուն՝ ներս գուցուած է:

ԳԱԲ. Աղնուամեծար Պարիս, ձեզ բան մ'ըսեմ, ահա աղջկան չչարցոցած ձեզ խօսրս կը տամ, աղջիկս ինձմէ զիտցիք, կարծեմ որ ըստ ամենայնի իմ խօսքէս գուրս չելներ, ու ոչ միայն կարծեմ, այլ և կասկած չունիմ: — Կնիքս, անկողին մանելներ առաջ անդամ մի քոյլ զնացելք ու իմացուցելք իրեն իմ Պարիս զակիս՝ իր վըրայ սէր ունենալը, ու ըսէք իրեն նաև, բայց միտքերնիդ պահեցելք, որ դաշ Չորեքշարթի, — չէ, կեցիք նայինք, այսօր ինչ օր է:

ՊԱԲ. Երկուշարթի, տէր իմ:

ԳԱԲ. Երկուշարթի, համ, համ: Աղէկ՝ բայց, Չորեքշարթի ալ շատ շուտ եղած կ'ըլլայ, Հինդշարթի ըլլայ թող. — Ըսէք իրեն, որ Հինդշարթի օրը, այս աղնուական կոմսին հետ կարգուի պիտի: — Մինչեւ այն օր պատրաստ կրնամք ըլլալ. ասանկ շուտ կարգուիլը կ'ողեք. սկինտ մեծ հարկիք չընենք. — մէկ երկու բարեկամ բաւական է. — ինչու որ, նայիցէք ինչ կայ. Գիպալտոս մեր աղդականն էր ու սպաննուիլն ալ շատ ժամանակ չէ, հիմա ենենք ու մեծ խնձորքներ ընենք նէ՝ վրանիս բամբասել պիտի տանիք թէ սուզ չենք ըներ, անոր համար ընդ ամենը հինդ վեց աղջական ըլլայ նէ՝ բաւական է: Բայց Հինդշարթի օրուան համար ինչ կ'ըսէք:

ՊԱԲ. Տէր իմ, երանի թէ Հինդշարթին վաղն ըլլար:

ԳԱԲ. Շատ լաւ, բաներնիդ գացէք: — Ուրեմն Հինդշարթի օր, խօսքերնիս խօսր: — Կնիք, գուք անկողին երթալէն առաջ Շիւլեկդային քով զնացելք անդամ մի և Հինդշարթի օրուան համար

նեաց պատրաստութիւն տեսնել տուեք : — Երթաք բարեաւ , տէր
իմ : — Ճըսակ թերեք , սենեակս . հօ' , առջևէս . այնքան ուշ է ,
որ քիչ մի ժամանակ ալ անցնի՝ պինտ կանուխ է պիտ' ըսենք . —
գիշեր բարի :

(իւնին :)

ՏԵՍՄԱՆ Ե.

ՃԻՒԵԿԵԳԻՑԱՅԻ սենեակը :

ՃԻՌՄԵԿՈՅ և ՃԻՒԵԿԵԴՐԱ և ՀՊԱՅ :

ՃԻՒԵԿԵ. Հիմա իրամ պիտ' երթաս . արշալոյս չծաղեցաւ գեռ .
սոխակն էր այն և ոչ թէ արտուտը՝ որ երկչոտ ականջիդ խորո-
փեաց մէջ արձականդեց . հաւատա , որ ամեն զիշեր կը զայ և սա
նունենին վրայ դայլայլիներ կ'երգէ . Ճշմարիտ , սիրականս , սո-
խակն էր :

ՃԻՌԱ. Արտուտն էր , որ արշալոյսին աւետատուն է , և ոչ թէ
սոխակը . անս սիրականս , նա վարը արեւելքին կողմի ցանցառա-
սիփիու ամսկերուն մէջէն ինտոր նախանձոտ շառաւիղներ կ'երկա-
նան . զիշերուան ճրագները վառեցան ու հաւան , և լուսամպիտ ա-
ռաւուտը՝ ալօտամերկ լերանց դադաթանց վրայ մատնատրոփ կեցեր
է : Կամ երթամ ու ապրիմ , կամ կենամ ու մեռնիմ :

ՃԻՒԵԿԵ. Այս լոյսը՝ արշալոյս չէ , ես զիտեմ , զուն որու կը
հասկցունես . արեւէն գոլորշայան մէտէորայ մ'է , որ այս զիշեր
քեզի ջահակիր ըլլալու է , որպէս զի մինչեւ Մանդուա երթալդ Ճամ-
բադ լուսաւորէ . ուրեմն քիչիկ մ'ալ կեցիր , երթալ պէտք չէիր
բնաւ :

ՃԻՌԱ. Թո՞ղ բռնեն զիս , թո՞ղ մահուան դատապարտուիմ . թէ որ
ասանկ կ'ուզեն՝ ասոր ալ զոհ կ'ըլլամ : Ես կ'ըսեմ՝ որ սա հեռուստ
տեսնուած մթնշաղ գորշութիւնը առաւոտեան լոյսը չէ , այլ կիս-
տից¹⁾ Ճակտին դալկադոյն բեկրեկումն է , այն դեզգեղանքն ալ՝ ար-
տուտիները չեն , որնց ելեկ ջակտն խալերը միը զլիւն այնքան
բարձր եղող ահաղնակամար երկնից տակ կը հնչէն . ո՛չ , աւելի

¹⁾ Լուսնոյ ցուլմանքն :

նստելու կ'ախորժիմ , քան թէ երթալու : — Եկուր մահ , բարի
եկար , հաղար բարի : Ճիւլեկդա այսպէս կ'աւզէ : — Ի՞նչպէս ես
հողիս , զրուց լնենք , գեռ առաւու չեղաւ :

ՃԻՒԵԿԵ. Եղաւ , եղաւ , զնամ , մի կենար , վաղէ . արտուտն է որ
անանի անշահ ձայներ կը հանէ , աներդաշնակ եղանակներ կը
հանայ և անձունի մակասաններ կը ճանչէ : Ոմանք կ'ըսեն որ ար-
տուտը քաղցրահայն ճըլուքառքներ կը հանէ , բայց ասորը ինտոր
ճըլուքուք է որ մեղ մէկզմէկէ կը բաժնէ : Ոմանք ալ կ'ըսեն որ
արտուտն ու զզուելի քարթօշը աշերնին կը փոխեն . ես ալ կ'ըսեմ
որ երանի թէ ձայներնին ալ փոխած ըլլային , ինչու որ այս ձայ-
նը՝ մեր բազուկները բազուկներէ զբանել կը տայ ու որսերդական
ձայներով քեզ իմ ձեռքէս որսալ կը տայ ցերեկին : Ահ , զնամ
ալ , հիմա զնամ , քանի կ'երթայ՝ լոյսը կը շատնայ :

ՃԻՌԱ. Ինչպէս որ քանի կ'երթայ՝ կը լուսնայ , ասանկ ալ քանի
կ'երթայ՝ մեր թշուառութիւնները կը շատնան :

ՍՆՈՒՑԻՉ և ՀՊԱՅ

ՃԻՌԱ. Խանթունիկս :

ՃԻՒԵԿԵ. Ի՞նչ է զայեկուհիս :

ՍՆՈՒՑԻՉ. Տիկին մայրերնիդ սենեակինիդ պիտի դայ հիմա . լուսեր
է , ինչ է այս ըրածնիդ , խելքերնիդ զլուինիդ ժողվեցէք , չորս
կողմինիդ նայեցէք :

(ՍՆՈՒՑԻՉ Ի՞նչ :

ՃԻՌԱ. (Քանալով) Ռւրեմն , պատուհան , թաղ լոյսը ներս դայ ,
ու կեանքն գորս ելնէ :

ՃԻՌԱ. Սնամ բարեաւ , մնաս բարեաւ . մէկ համբոյր՝ կ'անկէ
ետք իշնեմ :

(Հառնենա կ'ուրիշ զայ ու վայ կ'ուրիշ)

ՃԻՌԱ. Ի՞նչ . իրաւ ելքը հիմա ձեռքէս , սիրականս , ելքս , բա-
րեկանմա . ես օրուան ամեն մէկ ժամանան մէջ քեզու գործ առնել
պէտք եմ , ինչու որ մէկ բոպէի մէջ շատ օրեր լին : ահ հայու
հաշիւով՝ ես շատ պառացած պիտ' ըլլամ , մինչեւ գր սորունիմ
ճռումէոսս տեսնեմ :

ՃԻՌԱ. Սնամ բարեաւ , սիրականս , բնակին առէլք մի կ'անկէ
կորսնցնեմ . որ քեզ իմ բարեւերս խրկեմ միշտ :

ՃԻՌԱ. Ահ , կը յուսնա որ նորէն իրարու հանդիպինք :

10

ՃՌՈ. Հապման, չեմ երկբայիր որ, և այս բոլոր թշուառութիւնները՝ մեր ապառնի ժամանակին մէջ անուշ խօսակցութեանց նիւթեր պիտի ըլլան:

ՃԻՒԼ. Ո՛վ Աստուած իմ, խիստ չարագուշակ խորհուրդներ կ'անցնին մողես, այդ տեղ վարը կայնած տեղդ, զիտես որ, զերեզմանի մի խորաննին իջած մարդու պէս կ'երեկա աչքիս, կամ աչքաց տեսութիւնը պղտորեր է, կամ դուն գեղներ ես:

ՃՌՈ. Հաւատու ինձ, սիրականս, դուն ալ իմ աչքիս այնպէս կ'երեկս, հապս ցամաքեցուցիչ ցաւը զիտես որ մեր արիւնը չխմեր: Մնաս բարեաւ, մնաս բարեաւ: (Հայոց կ'ելեւ:)

ՃԻՒԼ. Ո՛վ բաղդ, բաղդ, բոլոր աշխարհք զքեղ անհաստատ կը կոչէ, թէ որ դուն անհաստատ ես, ի՞նչ բան ունիս այնպիսի մարդու մի հետ՝ որ իր անփոփոխ հաւատարմութեամբը նշանաւոր է: Բայց, բանդ նայէ, բաղդ, դուն դարձեալ անհաստատ եղիք, որպէս զի, այն ժամանակ՝ յոյս ունենամ որ զինք երկար ատեն չես սկահեր, ու նորէն ինձ ետ կը զըկես:

ՑԻԿ. ԳԱՅ. (Աւրուն) Է՛ս, աղջիկս, արթնցամած ես:

ՃԻՒԼ. Ո՛վ է այն կանչողը. սիրելի մայրս է. միթէ այսքան ո՞շ է մնացեր պառկելու, թէ այսքան կանուխ է արթնցեր: Արդեօք ի՞նչ տարօրինակ պատճառ ունի հոս զալու:

[ՑԻԿԻՆ ԳԱՅՈՒՆԵՏ Է ՀՐԱՅ:]

ՑԻԿ. ԳԱՅ. Խնտոր եղար, Ճիւլեղդա, հիմա ինտոր ես:

ՃԻՒԼ. Աղէկ չեմ, մայրիկ:

ՑԻԿ. ԳԱՅ. Տակաւին պիտի լառ քեռորդւոյդ մահուան վրայ: Վիտրդ ի՞նչ է, կ'ուզես որ արտսուքներդ երթան իւր զերեղմանն ողողեն ու զինք դո՞րս հանեն, այդ ալ ընելու կարող ըլլայիք՝ դարձեալ չպիտի կրնայիք զինք ողջացնել, անոր համար, այլ ևս լացերուդ վերջ մի տուր: Քիչ ցաւիլը պինտ մեծ սէր կը ցուցընէ, բայց պինտ շատ ցաւիլը խելքի պակառութիւն կը յայսնէ:

ՃԻՒԼ. Թաղէք որ ասանկ սրտակսկիծ կորստեան վրայ լամ:

ՑԻԿ. ԳԱՅ. Այդ կերպով կորստեան վրայ պիտի ցաւիս և ոչ թէ աղջականիդ, որու համար կը լաս:

ՃԻՒԼ. Այս կերպ կորստեան վրայ սիրտս պինտ շատ ցաւելուն՝ աղջականիս վրայ լալէն ի զատ ուրիշ բան մի չեմ կրնար ընտրել: ՑԻԿ. ԳԱՅ. Կարծեմ, աղջիկս, որ դուն անոր մահուան վրայ այնքան շատ չես լար, որքան զայն մեոյնող անզգամին կեանիքին վրայ կը լաս:

ՃԻՒԼ. Ո՞ր անզգամին, մայրիկ:

ՑԻԿ. ԳԱՅ. Այն անզգամ Հռոմէոսին:

ՃԻՒԼ. Անզգամն մինչև իրեն գալու միջավայրը՝ հաղարաւոր մլուններ կան: Աստուած իւր մեղքը երեսին չզարնէ: Ես իրեն կը ներեմ իմ բոլոր սրտովս, թէկ, իրեն պէս ալ, ոչ մէկը իմ սըր տիս այնքան շատ ցաւ պատճառած չէ:

ՑԻԿ. ԳԱՅ. Ագոր պատճառը՝ այդ չարագործ մարդասպանին ապրիլն է:

ՃԻՒԼ. Այն, մայրիկս, այս ձեռքերէն հեռի մնալով ապրիլն է: Ա՛յ, երանի թէ, ոչ այլ ոք, բայց եթէ ես՝ իմ քեռորդւոյս մահուան վրէցը լուծանէի:

ՑԻԿ. ԳԱՅ. Մի վախնար, մենք վրէցը կը լուծանեմք, այլ ևս մի լար: Ես այնպիսի մէկու մի մարդ պիտի հանեմ Վանդուա, — այս թափառախոյս աքսորեալը կը բնակի, — և այնպիսի պատուական մաքրողական մի տայ իրեն, որ մէկ՝ երկու չըսած Գիպալշտոնի քով ընկերութիւն ընելու երթայ. անկէ՝ աք՝ կարծեմ, որ սիրտդ կը պատշէի:

ՃԻՒԼ. Իրան կ'ըսէք, իմ սիրտս բնաւ երթէք Հռոմէոսին համար չպաղցէիր, մինչև որ զայն — մեռած — չտեսնեմ. տեսէք սիրտս ոքքան ցաւած է արենակցի մի համար: — Մայրիկ, թէ որ գուք թոյն տանող մարդը զտնէք, ես անոր խանութզը շինելը վրաս յասիտնեական քուն մի ննջէ: — Ո՛չ, սիրտս ոքքան կ'ատէ զինք, յասիտնեական քուն մի ննջէ: Այս սիրտս ոքքան կ'ատէ զինք, քանի անոր անունը կը լսեմ, — ու կը նայիմ որ իւր քով չեմ քանի անոր անունը կը լսեմ, որպէս զի Գիպալշտոս քեռորդւոյս սիրոյն համար կրնար երթալ, որպէս զի Գիպալշտոս քեռորդւոյս սիրոյն համար իւր մարմնոյն վրայ ունեցած ոխս լուծանեմ, որ մեռցուց զայն:

ՑԻԿ. ԳԱՅ. Դուն մի ջայները զտիր, ես ալ այնպիսի մարդ մի դունելը կը նայիմ: Բայց հիմա, աղջիկս, քեղ պինտ ուրախալը լուրեր պիտի տամ:

ՃԻՒՆ. Ուրախութիւնն ալ՝ — ի՞նչպէս մեր հարկաւորութիւնը ուշնեցած ատենին եկեք հասեր է. ի՞նչպէս լուբեր են, կ'ալաշէմ, սիրելի մայրիկու:

ՑԻԿ. ԳԱՅ. Գիտցած ըլլաս, աղջիկս, որ պինտ հոդածու հայր մ'ոնիս. այնպիսի հայր մ'որ քո սրտիդ ցաւերը ցրուելու մարք քեզի համար այնպիսի խօսք-իապ մ'ըրաւ որ յանկարծապէս ուրախալի օրեր պիտի տեսնես, զորս ոչ դժուն մաքէդ անցուցած ես, և ոչ ես կ'ըսայսէի:

ՃԻՒՆ. Աչքիս լոյս, մայրիկ, այդ ի՞նչ օր է նայիմ:

ՑԻԿ. ԳԱՅ. Լուսով կենաս, աղջիկու: Այս Հինգշարմի, առատուանց կանուխ, քեզ սիրահարեալ, երիտասարդ, վեհանձն ալ նուալանց Պարսիկ կոմաք՝ զքեզ Ս. Պետրոսի եկեղեցին տանելով և այն տեղ երջանկօրէն հետադասական զքեզ ուրիխասիրտ հարամի պիտի ընէ:

ՃԻՒՆ. Հիմա ես ալ երդում կ'ընեմ, նոյն ինքն Ս. Պետրոսի և Ս. Պետրոսի եկեղեցոյն վրայ, որ այն մարդը զիս ուրախասիրտ հարս մի չպիտի կրնայ ընել: Այսքան աշապարանաց վրայ կը զարմանամ. ինձի հետ պատկանի ուղուը, ինձի ամուսին ըլլալէն առաջ պէտք էր որ զար ու հետո սիրաբանէր: Վ'աղաշեմ, մայրիկ, ըսէք իմ հօրս և տիրոջս, որ գեռ կարդուիլ չեմ ուզեր, և կարդուելու ալ ըլլամ՝ երդում կ'ընեմ, որ առաւել Հռոմէոսի հետ կը կարդուիմ, զոր ինչպէս որ զիտէք, կ'ատեմ՝ առաւել քան զՊարիս: — Այս ի՞նչ համով լուրեր են եղեր:

ՑԻԿ. ԳԱՅ. Ահա հայրդ իր զայ, դուն իրեն խօսք համկցուր ։ Կայինք հիմա ինք ի՞նչ պիտ ըսէ քեզ:

ԳԱՅՈՒՆԻՑ և ՄԱՆՈՒՇ և ՏՐԿԵՆ:

ԳԱՅ. Երբոր արել մայրը կը մտնէ, շաղատարափ ցող կը տեղայ. բայց եղարօրդւոյս արել մտնելուն՝ յորդահոս աեղատարափ կ'անձրեէ: — Ի՞նչ է այդ, աղջիկ, հոսանք է՝ ի՞նչ է. այդ ի՞նչ պիտ ըլլայ, դեռ կը լսո. — այդ յորդանձրել յափտեանս ուել պիտի: Այդ պղատիկ անձդ՝ նաւիկ մի, ծով մի և հողմերն ես ձեւացուցեր. ինչու որ քո աշբարդ՝ զորս ծով կը լսել, զեռ ար:

մասսուոք կը տեղատին ու կը մակընթանան, նաւիկը՝ քո մարմինդ, ե, որ ոյս աղալից նվիրանոսին մէջ կ'առազաստէ. քո հառաջանքան ներդ ալ հողմերն են, որոնք, — արտասուացդ հետ կատղած, և արտասուաքդ ալ հողմոց հետ բորբոքած՝ թէ որ յանկարծահաս հանդարանութիւն մի վրայ չհասնի, քո ալէկոծուած մարմինդ ընկղմնն պիտի: Ի՞նչ ըրիք, կնիկ, մեր որոշմունքն իմացուցիք իրեն:

ՑԻԿ. ԳԱՅ. Իմացուցի, տէր իմ. բայց ինք երիկ չուզեր, ձեզմէ շնորհակալ է. քարը զլառուն, թող երթայ խենգուհին իւր դերեզան մանին հետ կարդուի:

ԳԱՅ. Ընկող, գուք ձայն մի հանեք, կնիկ, ես ալ այդ մաքուլ եմ: Ի՞նչ. Երիկ չուզեր, նայէ սառը, չըսէր որ մեզմէ շնորհակալ ըլլայ, զոռողանայ ու ինքզինք երջանիկ սեպէ՝ որ իրեն պէս հոտածին՝ ասանկ մէկ աշուական փեսայու մի զտանք. կը նայիք սառը ըրածին:

ՃԻՒՆ. Ես ձեր ջանից համար չեմ զոռողանար, այլ որդեսի բութեանդ համար շնորհակալ կ'ըլլամ. ինձ ատելի եղած անձին վրայ ի՞նչպէս կրնամ զոռող ըլլալ, այլ շնորհակալ կ'ըլլամ այն ատելի անձին համար, որ իմ սիրողը է:

ԳԱՅ. Այս ի՞նչ խօսք է, ի՞նչ ըսել է. այդ ի՞նչ ափեղցիկ տրամաբանութիւն է. զոռող չեմ, շնորհակալ կ'ըլլամ, — զարաձեալ շնորհակալ չեմ ըլլար — ետքէն զոռող կ'ըլլամ: — Սա պղտիկ կիրիլ նայցեք. ինձմէ ոչ երախտազիտութեամբ շնորհակալ եղեք և ոչ Հպարտութեամբ զոռողացիք, այլ քո անուշիկ միտքդ ըրէ, որ չինդշարթի օրը Ս. Պետրոսի եկեղեցին երթաս պարփիս հետ, եթէ ոչ զքեզ ականջէդ կը քաշքշեմ կը տանիմ: Գնա առջեւս, զեղնած չոր կաշե. գներս ելիր, շան զտակ, զեղնած շան ոսկոր:

ՑԻԿ. ԳԱՅ. Ի՞նչ կ'ընեք, հիմ, խելքերնիդ թռուցիք:

ՃԻՒՆ. Սիրելի հայր, ծնիման վրայ կ'աղաշեմ զձեզ, համբերութեամբ մտիկ ըրէք, միայն մէկ խօսք մ'ըսեմ ձեզ:

ԳԱՅ. Գնա կախէ ինքզինքդ, ջրգիկ, անհնաղանդ զարշելուհի ։ Ի՞նչ պիտ ըսեմ. — կամ Հինդշարթի օրը եկեղեցի պիտ երաս, կամ մէկ մ'ալ երեսս չպիտի տեսնես. ձայնդ կտրէ, ուսա-

առանխան մի՛ տար, պատասխան պէտք չէ։ Մատներս կը կեռան = — Կընիկ, մենք ինտո՞ր փառք կը տանք Աստուծոյ, որ մեզ մինալ այս գուակը տալուն՝ իւր օրհնութիւնը վրանիս է ըսելով, Հիմա նայեցնէք որ այս մէկ համն այ շատ է եղեր՝ անիծից արմատ մի ըլլալուն։ — զո՞ւրս թող կորուի երթայ, աչքս չտեմնէ սա շն զաւակը։

ՍԱՌԻՑ. Աստուծոյ օրհնենքը վրայէն պակաս չըլլայ։ — Աղեկ բան չէ այդ ըրածնիդ, ակը իմ, այդ ինչպէս երեսը վար առիք։

ԳԱԲ. Ինչո՞ւ համար աղեկ չէ եղեր, խելացի խաթուն։ Հրաման քրդ լեզուդ կարճ ըրէ, թագուհի իմաստութեան, Հրամանքրդ գնա քեզի պէս պառաւներուն հետ փախոսէ, զնա ասկէ։

ՍԱՌԻՑ. Մեղայ, ես զէշ բան ըսի որ։

ԳԱԲ. Փա՛ռք Աստուծոյ, Հրամանոցդ անուշիկ որսկիսութիւնը։

ՍԱՌԻՑ. Մեղայ, մարդ բերանը չբանայ, քա։

ԳԱԲ. Պատպանձէ, մըրմըր պառաւ, զնա պառաւ խնամիներուդ հետ թափէ այդ լեզուները, ագոնք հիմա մեր քոնիս ստակ մի չեն արժեր։

ՏԻԿ. ԳԱԲ. Դուք ալ դըրխնիդ պինտ մի՛ տաքցնէք։

ԳԱԲ. Աստուծոյ տուած հացը մուրամ, այս խեղենալու բան է աէ։ զիշեր չըսի, ցորեկ չըսի, ուշ չըսի, կանուխ չըսի, սա ուր որ զանուեցայ նէ՛ թէ՛ տունը, թէ՛ դուրը, թէ՛ առանձնութեանս մէջ, թէ՛ բնիկիրութեան մէջ, թէ՛ արթուն եղած ատենս և թէ՛ քունի մէջ խելքա միտքս զինք կարգելու ետեւէ եր. Հիմա որ հացիւ հաղ կարող եղանք թագաւորական ցեղէ, հայրենական հարուստ, տարիքը չարած, պինտ աղնուարարոյ, պակասութիւն մի չըւնեցող, (ալ ինչ ըսեմ) սա մարդուն սիրալ պինտ ախորժած այսպիսի աղշ նուական մարդ մի ձեռք անցունելու, — նայիս որ մեր խենգուհի միծ-կնիկ խամաճիկը, սրունքները վեր չելած քյոթիկը բաղդը ուսքին դայ ու ինք երեսը դէմքը ծռմակէ, ու — ես վշտ կաբժուիք, ես քին վշտ ինար չնել, ես բեր շատ ուղարկէ եմ, ի առաջնութեան, ներեցէ ինչ, — բուէ, ասանկ կարգուիլ չուզիս նէ, զիմես որ ես ալ քեզ պիս մերեմ, ալ զնա դըրխութ Ճարը տես, ես ալ այսուհետեւ չեմ ռազեր որ իմ տոհս կենաս. խելքը դըրխուդ ժողվէ, աղեկ նայէ

ինչ կ'ըսեմ, կատակ չէ ըսածու։ Հինգշաբթին հանելու վրայ է, ձեռքդ սրախիդ վրան դիք ու միաբրդ գարձու որ զաւակս ըլլաս ու քեզ բարեկամիս հետ կարդեմ, եթէ ոչ կորիք զնա, ինչ որ կ'ուզիս եղեր, մուրա, անօթութենէ մունիք, փողոցներուն մէջ սատեկէ. ինչու որ, հոդիս վկայ կ'ըսեմ, որ քեզ աղջիկս չեմ ճանաչեր ու հայրենի ժառանգութենէզ կը զրիկմ գքեզ։ Հաւասան կ'ըսեմ, խելքդ դըրխուդ ժողվէ, ես երդումս ետ չեմ առներ։

(կ'ենէ։)

ՃԻԼ. Արդիօք երկնից մէջ բնաւին դժութիւն մնացած չէ՞ որ իմ ցաւոցս անդունգները տեսնէ։ Ա՛՛, սիրելի մայրիկս, զիս զըս նէն զուրս մի վանտէք, զո՞նէ մէկ ամիս, կամ մէկ շաբաթ ըլլայ ուշացուցէք այս ամսւանութիւնը, թէ որ չէք ուզեր որ իմ հարս սանեկան անկողինս՝ այն խաւարչուտ գամբարանին մէջ ըլլայ, ուր որ Գիպալտոս պառ կած է։

ՏԻԿ. ԳԱԲ. Այլ ևս ինձ բան մ'ըսեր, ինչու որ առ բերանն չալիսի բանամ, սիրտդ ինչ որ կ'ուզէ այն ըրէ, այլ ևս մէկ բան նի չեմ խառնուիր ես։

(կ'ենէ։)

ՃԻԼ. Ա՛՛, Աստուծած։ — Գայեկուհիս, ասոր առ չեն ինտո՞ր առնենք. ամուսինս երկրի վրայ է, և վստահութիւնն երկինք, այս վստահութիւնը ինտո՞ր նորեն երկիր գտնայ պիտի, բայց միայն երբ ամուսինս երկիրը թող տայ և զան երկնքէն ինձ իրկէ։ — Միիթ թարել զիս, յորդորէ վիս։ — Ափսոս, ափսոս, երկինքն ալ ասանկ որողայթ մի կրնայ եղեր լարել ինձի պէս փափուկ մարմին ունեցող անձի մի դէմ։ — Դուն ինչ կ'ըսես, զո՞նէ ուրախութեան իօսք մ'ալ չունիս, միսիթարութեան իօսք մ'ալ չելնէր բերնէզ, դայեկուհիս։

ՍԱՌԻՑ. Կայեցէք, ես ձեղ բան մ'ըսեմ։ Հոռմեռ աքսորուած է ու աշխարհ աշխարհ անցնի ալ ետ զառնալու չամարձակիր որ ձեղի համար կադար ըստարակ ի եխէ, եթէ ոչ, ետ զառնալու ալ ըլլայ՝ զառնալու պիտի զայ։ Անոր համար, հիմա որ զործերն այս աստիճանի հասան, ինձի այնպէս կ'երեի որ կոմին հետ կարգուին ամենէ աղեկն է։ Հը, այն ինչ սիրուն աշխարհական կարիք մ'է։ Հոռմեռ անոր քով քորջի կտոր մ'ըսել չէ, արծիւ մ'իսկ Պատ-

րիսի պէս կայտառ, աշխոյժ և կենդանի աչեր չունի, տիկին ։ Հո-
ղիս վկայ, կարծեմ որ այս երկրորդ կարդըուքը զմեղ երջանիկ
կ'ընէ, ինչու որ ձեր առաջինը կը զերազանցէ. չգերազանցեր նէ
ալ՝ աս կայ որ ձեր առաջինը մեռած է, կամ աւելի աղէկ կ'ըլ-
լար որ մեռած ըլլար, քանի որ աշխարհիս երեսը ողջ ըլլալով
ձեղ օգուտ մի չունի ։

ՃԻՒԼ. Ագոնք սրտէ՞դ կը զբոցես ։

ՍՆՈՒՑ. Ո՛չ միայն սրտէս, այլ և հողիէս, թէ որ անսանկ չէ
երկուքն ալ գետնին տակն անցնին ։

ՃԻՒԼ. Ամէ՞ն ։

ՍՆՈՒՑ. Ինչո՞ւ համար ։

ՃԻՒԼ. Հասկցանք, պատուականաբար միմիթարեցիր զիս ։ «ԱՌՈ
ՊՆԱ, ու ըսէ մօրս, որ հօրս սիրաը ցաւցնելուս համար՝ Հայր Լաւ-
րենափոսի խորցը կ'երթամ որ խոստովանանք ըլլամ ու արձակում
առնեմ ։

ՍՆՈՒՑ. Ամէ՞ դլխուս, երթամ այս խոհեմութիւնդ հաւեցայ ։
(կ'ենէ ։)

ՃԻՒԼ. Անիծած պատառ ։ ո՛չ, չարասէր սատանուհի ։ Աւելի
մեծ մեղք է — որ ես այս կերպով երդմանաց դժոնուիմ, քան թէ
իմ էրիկիս յարդը կտրեմ այս մի և նոյն լեզուաւ, որ այնքան հա-
զարաւոր անդամներ անհամեմատաբար գովեց զայն ։ — Կորիր զնա,
չարախրատուհի ։ այսուհետեւ սիրսու և գուն երկպառակուած էք իւ-
րամի ։ Խոստովանահօրս քով երթամ, նայիմ ինչ դարման կը
գտնէ. թէ որ ամեն բան պարապէ, գննէ մեռնելու կարողութիւն
ունիմ ։

(կ'ենէ ։)

ԱՐԱՐՈՒԱԾ Դ.

ՏԵՎԱԲՈՒՆ

ՃԻՒԼ. ԼՍԻՐԵՆՏԻԱՆՍԻ խորի ։

ՃԻՒԼ. ԼՍԻՐԵՆՏԻԱՆՍԻ և պարս և հրաւան:

Ճ. ԼԱՏ. Հինդշարթի, տէր իմ, հապա միջոցը պինտ կարճ է ։
ԳԱՅ. Գաբուրէտ անհերս այնպէս կ'ուզէ ։ ես ալ յապալմանք
սիրով մէկը չեմ, որ իր արտորալը ետ ձեմ ։

Ճ. ԼԱՏ. Դուք կ'ըսէք որ զեր օրիորդին միաքն իմացած չեք ։
այս զործն ինձ պինտ կ'երսի, ասանկ բանի մէջ մանելը
պինտ չեմ ախորդիր ։

ԳԱՅ. Դիպալմասի մահուան վլրայ անմիթաբար լալուն հաւ-
մար, պինտ քիչ սիրախօսութիւն կրցայ ընել ։ ըստ որում Ավրո-
դիտէ՝ արտասուակոծ տան մի մէջ չժպափի ։ Եւ հիմա, հայր պա-
տուական, իւր հայրը վտանգաւոր բան կը կարծէ որ իւր աղջին
անսփոփելի մորմոքներու մէջ թողու ։ ահա ասոր համար հասու-
նամիտ խոհեմութեամբ մի մեր շուտափոյթ ամուսնութիւնն ընել
կ'ուզէ, որպէս զի անոր արտասուաց հեղեղները կասեցնէ, որք քա-
նի որ օրիորդը անզայգ մնայ այնքան աւելի չյորդեցնելու պատրա-
կաւ, ընկերութիւն մ'ունենայ նէ իւր վրայէն անսնց ցրուելը դիւ-
րին ըլլալու է ։ Հիմա իմացաք կարծեմ այս արտօրանաց պատճառը ։

Ճ. ԼԱՏ. (Դէ կողմ) Երանի թէ ուշացնելու պատճառը չգիտնայի ։
— Ահա, տէր իմ, տէս օրիորդը, գէպ' լմ խուցս կը զայ ։

ՃԻՒԼԵՏՐՈՒ և հրաւան:

ԳԱՅ. Այս ինչ բարեբազդութիւն է, որ մէկ աեղ հանդիպէ ։
ցանք, սիկինս և կինս ։

ՃԻՒԼ. Այդ կընայ ըլլալ, տէր իմ, երբ կին ըլլալու կարող ։
ըլլամ ։

ՊԱՐ. Կրնայ ըլլալ, հապա, պէտք է որ ըլլայ, սիրուհիս, Հինդշաբթի օրը:

ՃԻՒԼ. Ի՞նչ պիտ' ըլլայ նէ՝ թնդ ըլլայ:

Հ. ԼԱՏ. Այդ՝ հասարակ խօսք մ'է:

ՊԱՐ. Տէր հօր խոստովանանք ըլլալո՞ւ եկաք:

ՃԻՒԼ. Ադոր պատասխան տամ" ձեզի խոստովանանք եղած պիտի ըլլամ:

ՊԱՐ. Զիս սիրելնիդ ալ մի պահէք իրմէ:

ՃԻՒԼ. Այն ժամանակ ձեզ պիտի խոստովանիմ թէ կը սիրեմ զինք:

ՊԱՐ. Նոյնպէս ալ, ստոյդ եմ, պիտի խոստովանիք որ կը սիրէք զիս:

ՃԻՒԼ. Թէ որ այդպէս ընեմ" խոստովանանքս՝ առաւել ձեր եռտելէն՝ քանի թէ ձեր առ ջև խօսելուս համար յարդ ունենալու էր:

ՊԱՐ. Խելջ սիրականս, այդ ինչպէս փոխուեր է գէմքդ արտասուբներէ:

ՃԻՒԼ. Արտսուբները՝ պինտ պղտիկ յաղթութիւն մ'առին անկէ, ըստ որում, իրենց վասատութիւնէ առաջ ալ՝ բաւական անշահ բան մ'էր:

ՊԱՐ. Այդ ըսածներով՝ արտսուբներէն աւելի կը մնասես զայն:

ՃԻՒԼ. Շշմարտութիւնն ըսելը՝ զրաբարտութիւն ընել չէ, տէր իմ. և ինչ որ ըսի՝ իմ գէմքիս զրոցեցի:

ՊԱՐ. Քո գէմքդ իմինս է, և զուն զրաբարտեցիր զայն:

ՃԻՒԼ. Կրնայ այդպէս ըլլալ, ինչու որ այլ ևս իմս չէ: — Ճիւմա ատեն՝ ունիք, տէր հայր, թէ կ'ուզէք որ իրիկուան ժամասացութեան ատեն զամ:

Հ. ԼԱՏ. Ճիւմա ժամանակ ունիմ, տրամուհի աղջիկս: — Կը խնդրեմ, տէր իմ, քիչիկ մի մինակ մնալու հարկաւորութիւն ունիք:

ՊԱՐ. Աստուած չընէ, որ սրբալան պաշտօնի մի շիոթութիւն տամ: — Ճիւլիէ գդա, Հինդշաբթի աւտուանց կանուխ, պիտի գամ արթնցնեմ զքեզ. մինչեւ այն ատեն, ծառայ եմ, ու պահէ սա ջերմեռանդ համբոյրս:

(Պարէիս ի՞նչնէ:)

ՃԻՒԼ. Ո'չ, զոյլ դուը, և զոյլէդ ետք՝ եկուր հետս լայ: Այլ ևս ոչ յայս մնայ, ոչ դարձան մնայ, և ոչ օգնութիւն:

Հ. ԼԱՏ. Ա'չ, Ճիւլեկդա, ես արդէն զիտեմ քո ցաւդ, որ սիրտս այնքան կ'անձրկիցնէ և որուն ինելք չեմ կրնար զզացնել. ես լսեցի որ Հինդշաբթի օրն անպատճառ այս կոմսին հետ կարգուելու ես:

ՃԻՒԼ. Տէր հայր, այդ լսածդ ինձ մ'ըսեր, կ'աղաչեմ, առանց ինձ իմացնելու նաև որ ինտոր կրնամ առ չեն առնուլ. թէ որ դուն ինձ իմացնելու նաև որ ինտոր կրնամ մի չես կրնար ընել, զանէ իմ մտքիս ու քո ինելքովդ օգնութիւն մի չես կրնար ընել, զանէ իմ մտքիս ու բոշունքն արգարացի մեակէ, որ հիմա իսկըցն այս դաշոյնով ես ինքնիքիս օգնութիւն տալու կարող ըլլամ: Աստուած՝ իմ սիրտս ինքնիքիս օգնութիւն տալու կարող ըլլամ: Հումում մեկտեղ զուղեց ու գուն՝ մեր ձեռքերը. և այս ձեռա և ձումէոսը մեկտեղ զուղեց ու գուն՝ մեր ձեռքերը. քը՝ որ քո միջնորդութեամբ Հումում ստորագրութիւն տուաւ, ուրիշ դաշնագրութեան ձեռագիր մի տալէ և կամ իմ անկեղծ սիրտը՝ նենդաւոր անհաւատարմութեամբ մ'ուրիշն մի հետ կապուելէ առաջ՝ այս գանակը, երկուքն ալ կրնայ բնաջնջ ընել: Վասնորդ, քո երկարժամանակեայ փորձառութեամբ՝ ինձ ինելք մի սորվեցնուր. եթէ ոչ նայէ անդամ մի, սա արինարբու դանակը տեսար, երբ պո հասակիդ և յաջողակութեան զօրութիւնը պատուաւորաբար աշուկ վախճան մի տալու կարող չըլլան՝ իմ և իմ ցաւոցս մեջ եղած վէճին դատահատը կրնայ ըլլալ: Մի արեւընար, ինչու որ մինչեւ խօսերուդ գարման մի դանելու կարող չըլլանին միայն պիստի երկարաձեմ. ես ալ իմ մահս:

Հ. ԼԱՏ. Կեցիք, աղջիկ, միտքս յայս մ'ինկաւ, որու դորձադրութիւնն այնքան յուսահատութիւն կը պահանջէ՝ որքան որ արգիլել ուղած ամսւանութիւննիս յուսահատարերէ: Թէ որ Պարիս կունին հետ կարդուելն աւելի աղջիկ ինքզինքդ մեռցնելու կամքի կունին հետ կարդուելն աւելի աղջիկ ինքզինքդ մեռցնելու կամքի զօրութիւնն ունիս, ուրեմն հաւանական է նաև, որ մահուան պինտ մօտ բանի մի ձեռնարկելու կը յանդդնիս որ այս խայտառակութիւնը խափանուի. այս այնպիսի միջոց մ'է, որ մի և նոյն մահուան կը համարիսկիս՝ որ մահուանէ զերծիս: Թէ որ այս բանն ընելու կը համարձակիս, քեզ գարման կրնամ տալ:

ՃԻՒԼ. Ո'չ, աւելի աղջիկ է որ հրամայես ինձ որ երթամ նա բարձր

տշտարակին վերնարեղերէն վար նետուիմ. կամ, աւազակայաձախ ճամբայներէն անցնիմ. կամ, հրամայես որ օձարնակ այրերու մէջ խօթուիմ. մռնչող արջերու հետ շղթայուիմ. կամ, ամեն զիշեր դերեղմանատան մի մէջ փակուիմ, ուր՝ մեռած մարդոց շառաշա- փլոյզ ոսկերուակը, քարշահոտ կմախները, և դեղնած դեղնկած այստանհետ սկաւառակները վրայօքս դիզուած ըլլան. կամ հրա- մայես որ նոր փորտուած դերեղման մի մռնեմ ու ինքզինքս նոր թա- զուած մռելի մի պատանքներուն մէջ պլիմ, քան թէ Պարիսի հետ կարգուիմ. Այս ըսածներու որոնք զրուցելու լսելով վրաս սար- սափ կը զայ, առանց վախնալու և առանց տարակուսանաց կ'ընէի, որոյէս զի իմ սկրելի տարփառիս քով անտարա կին մի մնամ:

Հ. ԱԱ. Ալ կ'օգտէ, հիմա իս մտիկ ըրէ, տնւն զնա, զուարթ կեցիր ու Պարիսի հետ կարգուելու հաւանութիւն տուր, Վաղը Չորհշաբթի է, վաղը զիշեր՝ նայէ որ մինակդ քնանաս ու մի թո- ղուր որ դայելու հիդ սենեակդ պակի. այս սրուակը կ'առնես, ու երբոր անկողինդ կը մռնես՝ մէջն եղած շողեթոր հեղուկը կը խմես. ինըմածիդ պէս՝ բոլոր ջեղերուդ մէջ պազութիւն մի տարածելով վրագ մահահանդոյն նիրհման թալկութիւն մի պիտի զայ, որ քո բոլոր կենսական զօրութիւններդ պիտի թմրեցնէ, ինչու որ զարկիդ բնական նետուածքը հատնելով բազմումը պիտի դադրի. ոչ մար- մինդ տաքութիւն պիտի ունենայ, և ոչ շունչդ վրագ պիտի մնայ որ ողջ ըլլալդ հաստատուի. շրթանցդ և այտիցդ վարդափայլ դոյ- նը պիտի խամրի ու մոխիրի դոյն պիտի դառնայ. աշացդ պատու- հանները պիտի դոցուին, որպէս թէ մահուան՝ կենաց օրը դոցած ժամանակն ըլլար. բոլոր անդամներդ իրենց զարթնական շարժուածք- ները կորսնցնելով, այնպէս պիտի չորնան, փայտ կորին ու սառ- նահանդոյն պազին՝ որ մռելի պէս պիտի երեսս: Այս կեղծ մաս- հուան փոխառիկ անզգայութեան մէջ լման քառսուներկու ժամ պիտի մնաս ու անկէ՝ աք խորունկ քունէ մ'արթնցածի պէս աչերդ պիտի բանաս: Բայց երբոր փեսացան զայ առտուանց որ զքեզ անկողինէ գերյնէ, պիտի նայի որ մռուած ես, անկէ՝ տք (ինչպէս որ մեր քազքին սովորութիւնն է) քո ամենէ փառաւոր լսթերով գքեղ զազաշին մէջ պիտի դնեն երեսդ բայց՝ և քեղ միւնցին դամ:

բանատան մէջ պիտի թաղեն՝ ուր որ բոլոր Գաբուլեանց ցեղը թա- ղուած են: Այս միջոյներուն, Հռոմէսու, քո խելաբերութենէդ ա- ռաջ՝ իմ զրած նամակներէս մեր նենդարիութիւնը իմանալով, շուտ հոս պիտի զայ: Գալէն ետք, ինք ու ես քո սթափիլլ կը հը- կենք և միենցն զիշերը քեզ կ'առնէ Հռոմէսու ու հետը Մանդուա կը տանի: Աչա այս բանը կընայ զքեզ այս մօտահաս նախատինքէն ազատ պահել, թէ որ յոզդողդասէր երկչուութիւն մի, կամ կա- նացարայ վեհերուութիւն մի՝ այս ձեռնարկութեան մէջ քո ա- րիս թիւնդ չեն վշատեցներ:

ՃԻԼ. Տուր, կ'ալաչեմ, ինձ վախի զրուց մ'ըներ. տուր Աս- տուծոյ սիրոյն համար:

Հ. ԱԱ. Ա՛ռ, զնա շրուտ, մտքիդ վրայ հաստատ ու որո՞շ կե- ցիր. ես ալ հիմա վաղղաղակի տարփաւորիդ նամակ զրելով՝ կրօ- նաւոր հայր մի պիտի զրկեմ իրեն:

ՃԻԼ. ԱԷ՛ր, ոյժ տուր ինձ, և այդ ոյժը նպաստելով՝ կ'աղա- տէ զիս: Մնաս բարեաւ, տէ՛ր Հայր: (կ'ենէն:)

ՏԵՍՄԲԱՆ Բ.

ԳԱՐԱԿԱՆԵՏԻ տան մէջ սենեակ մի:

ԳԱՐԱԿԱՆԵՏ, ՏԻԿԻՆ ԳԱՐԱԿԱՆԵՏ, ՍՆՈՒՑԻՉ և ՍՊԱՍՍԱՐք և ՀՐԱԵՆ:

ԳԱԲ. Գուն սա տումսակին մէջ եղած մարդիկները հրամցնեն պի- տի միայն: (Ծառապահ կ'ենէ) Ինձ նայէ, գուն ալ զնա քան վար- պիտ խոհակեր գտիր:

Բ. ԾՈՅ. Տէ՛ր իմ, անշահ խոհակեր չեմ բերեր որ, ես կ'եր- թամ մատերնին լիզող մաքրասէրները կ'ընտրեմ:

ԳԱԲ. Այդ կերպով ինտոր կ'իմանս որ մաքրասէր են:

Բ. ԾՈՅ. Խստոր պիտի՝ իմանամ. Հը՛չ, այն խոհակերները որ մատերնին չեն լիզող, վարպետ չեն. անոր համար, այն որ մատ- ները չկրնար լիզել հետս չպիտի զայ:

ԳԱԲ. Գնա, քեղ տեսնեմ: — (Բ. Ծառապահ կ'ենէ) Այս անդամ

ալ թող այս ասանկ յանպատրաստից երթայ : — Ի՞նչ ։ աղջիկս
Հայր Լաւրենտիոսին է դնացեր :

ՄՆՈՒՅ. Հրամաբեկք, հապալ :

ԳԱԲ. Նայինք, զուցէ իր բարի խրամները անոր վրայ աղեկ աղշ
դեցութիւն մ'ընեն : Ինքնաշաւան չար զիմագարձուհին :

ՃԻՒԵԼԵԴԻՎԱՆ Է ՀՐԱՅ :

ՄՆՈՒՅ. Ահա կը դայ . խոստովանանքին վրայ դեմքը ծիծաղել
սկսեր է :

ԳԱԲ. Ինտոք եղար, պինդզլուխ, ուր զացիր սըլընկուեցար :
ՃԻՒԵԼ. Ուր որ, ձեզի և ձեր հրամանաց դէմ անչնաղանդ կի-
մաղարձութեամբ զործած մեղքիս վրայ զղջալ կը սովորի մարդ .
սրբակրօն Հայր Լաւրենտիոսը պատուիրեց ինձ որ առջենիդ ծունկի
վրայ դամ ու ձեզմէ թողութիւն ինդրեմ : — Ներեցէք ինձ, կը
թախանձեմ, այլ ևս այսուհետեւ խօսքերնեկ դուրս չեմ ելներ :

ԳԱԲ. Կոմոք կանչել տուր, զնա, ըսէ իրեն, որ վաղ առտու
կ'ուզեմ որ միութեան պասկը կատարուի :

ՃԻՒԵԼ. Ես այն երիտասարդ պարոնը՝ Հայր Լաւրենտիոսի խոցը
տեսայ և ձեռքէս եկածին չափ սէրս յայտնից՝ առանց համեստու-
թեան կոպարներէն անդին անցնելու :

ԳԱԲ. Շատ ապրիս, ո՛չ, ուրախացայ, տեսա՞լ հիմա . — ոտք
ել նայիմ, այս ասանկ կ'ըլլայ, հապալ : — Կոմսին հետ տեսնուիմ
անդամ մի . զնա ըսի քեզ, չլսեցիր, զնա հոս կանչել տուր զայն :
— Ճշմարիա Աստուած, սա վերապատուելի սրբակեաց կրօնառոր,
ինչ որ ըսես կ'արծէ, հիմա բոլոր քաղաքացիք իրմէ շնորհակալ
ըլլալ պէտք են :

ՃԻՒԵԼ. Գայեկուհի, հետս սենեակս կը դա՞ք, որ վաղը դրուե-
լիք զարգարանքներուս որը որ վայելուչ ու հարկաւոր կը կարծէք
նէ՝ ընարենք մէկ անդ :

ՏԻԿ. ԳԱԲ. Կեցիր նայինք, այդ ինչ արտորալ է, գեռ մինչեւ
Հինդշարթի բաւական ժամանակ կայ :

ԳԱԲ. Գնա, դայեկուհի, հետք զնա . վաղը եկեղեցի պիտ' եր-
թանք :

(ՃԻՒԵԼԵԴԻՎԱՆ և Դայեկուհի ինընեն :)

ՏԻԿ. ԳԱԲ. Ուտելիքները պատրաստելու ժամանակ չմնաց, զրե-
թէ զիշերն ալ վրայ կը համնի :

ԳԱԲ. Զայն մի հաներ գուն, կնիկ, ես հիմա մէջ կը մտնեմ
և ամեն բան կարգին կը դնեմ, ճշմարիտ : Դուն Շիւելելուային
քով զնա, զարգարանքները մարգարանքները շխոկեցներ . ես այս
զիշեր անկաղին չեմ մտներ որ . — ինքնիր զլիուս թող տուր զիս,
այս անդամ տանտիկնութիւնը ես ընեմ թող : — Ո՞վ կայ, հօ,
իս նայեցէք, — ամենքն ալ գուրս են ելեր : Ճող չէ, զո՞նե ես
ինքս երթամ պարիս կոմը զանեմ ու ըսեմ որ վաղուան պատ-
րաստ դանուի . չես զիտեր սիրս ինառը հանդարտեցաւ, քանի
որ սա շարաձնի աղջիկը կարգին մտաւ : (ՔԵՆՔՆ :

ՃԻՒԵԼԵԴԻՎԱՆ Գ.

ՃԻՒԵԼԵԴԻՎԱՆ ՍԵՆԻԿԱԿԸ :

ՃԻՒԵԼԵԴԻՎԱՆ և ԴԱՅԵԿՈՒՀԻ ԻՆ ՀՐԱՅ :

ՃԻՒԵԼ. Չէ քա, ասոնք աւելի աղւոր ըրգակներ են : — Բայց
կ'աղաշեմ, սիրելի գայեկուհիս, այս զիշեր զիս մինակ թող : ինչու
որ պինա շատ ալօթք ընելու պէտք տնիմ, որպէս զի Աստուած
զթայ իմ վիճակիս վրայ, որ ինչպէս որ աղեկ զիտես, շատ ձա-
խ որդ դնայ ու մեղքերս շատցաւ :

ՏԻԿԻՆ ԳԱԲՈՒԵԼ ԻՆ ՀՐԱՅ :

ՏԻԿ. ԳԱԲ. Ինտոք եղար, պինտ զբաղած էք, կ'ուզէք որ օդ-
նեմ ձեզ :

ՃԻՒԵԼ. Չէ, մայրիկ . վաղուան հարկաւոր եղած բոլոր հա-
գուստ-կապուստներն ընտրեցինք ու մէկ զի զրինք . թէ որ կը հա-
ճիք, հիմա թոյլ տուեք որ մինակս միամ, և այս զիշեր թող
գայեկուհին ձեզի հետ կենայ . ինչու որ, շատ աղեկ զիտեմ, որ
ասանկ մէկ յանկարծական պատրաստութեան մէջ ամենուդ ալ ձեռ-
քը պարապ չէ :

ՏԻԿ. ԳԱԲ. Գիշեր բարի : Անկողինդ մակիր ու պառկէ . ինչու որ քունի կարօտվթիւն ունիս :

(Տիլն Գաբրուլէու և Դայեկումնին կ'ենէն :)

